





X-2145





# Գ Ա Բ Ա Կ Ն

ԵՄՍԸԴԻՔ


ԱԶԳԵՅԻՆ ԼՈՒՍԵՒՈՐՈՒԹԵՅՆ ԵԽ  
ԴԱՍԻՎՐԵՎԱՈՒԹԵՅՆ

1866

ԵՐԵՎԱՆ ՏԱՐԻ

Ամասաետը 1.

Պայծառ արփին արդ բարձրացաւ  
Հալման սառախն ժամէ արդէն .  
Վարսկի վարդին ոստ կակլացաւ ,  
Օսաղկման ծառին ժամէ արդէն :  
Պետքոս վարդապետ Պափանցի :



## ԲՈԱԾԵՎԱԾԿՈՒԹԵՒՆ

Վարուն ամսազիր . Ս. Ա. Ք. Մանդինեանց .	1— 6
Եկեղեցական պատմութեան ազդեցութիւնը .	
Մանդինեանց . . . . .	7—10
Համառօտ Տեսութիւն Եկեղեցական Պատմութեան .	
Մանդինեանց . . . . .	11—22
Տերունական Եղօթքի Մեկնութիւն . Ա. Տէր	
Յակոբեանց . . . . .	23—30
Օրիորդների Դաստիարակութիւն . Մ. Թաղիադեանց . . . . .	31—57
Ստորագրութիւն Թիգիլիզու . Ա. Տ. Յակոբեանց .	58—64



# ԳԱՐԱԿՆ

## ԸՄՍԵԳԻՐ

Ըղային Լուսաւորութեան և Դասախարակութեան :

---

Ե. տարի - ամսահար Ե. Յունիս - 1866.

---

Պայծառ արփին արդ բարձրացաւ,

Հալման սառին ժամէ արդէն.

Վարսիր վարդին ոստ կակացաւ,

Օսովկման ծառին ժամէ արդէն :

Պետք վարդապետ Ղափանցի :

Հինգերորդ դարն համարվումէ Հայաստանի համար  
ոսկեգար, զի այն ժամանակ զատանեցաւ մեր լեզուի դիրն,  
ծաղկեցաւ զիտութիւնն հանգերձ լրդւաղիտութեամբ, աշ-  
խարհն ցնծումէր իրեւ դարնան բուրաստան, տղիտութեան  
ձիւնն հալւել էր, բայց ոչ ամենայն աստիճանի և կարգի  
մարդկանց մէջ, վասն զի այն լուսաւորութիւնն ատրածուած  
էր հոգեւորական մասնի մէջ, որոցմէն ծաղւեցան զանազան ա-  
ռարկաների մատենադիրներ, բայց քաղաքացիք, արշեստա-  
ւորներ և զիւղականներ զուրկ մնացին ոչ միայն արտաքին  
ուսմունքներից՝ այլ և կրօնականից, որոց վերայ տիրած էր  
անուսումնականութեան ձմեռն, մանաւանդ սաստկացաւ նու-  
րա բուքն ու ցուրան այն ժամանակ՝ երբ Հայաստան ըն-  
կառ Յոյների և Առհամականների իշխանութեան ներքոց  
և նոցա բունութենից նեղացած՝ սահաւեցան ցիրուցան լինել

աշխարհքի երեսին օտար կլիմայի ազգեցութեան ներքոյ , որ  
պատճառ եղաւ կրօնափոխութեան և ազգի անդամների պա-  
կասութեան և զիսութեան կորչելուն , մինչև որ հոգեորա-  
կանների լրւաւորութիւնն էլ սկսած 14 դարից բքատար ե-  
ղաւ . և նոցա մէջ մնաց միայն ստւեր և ոչ բուն կերպա-  
րանք : Բայց այս 19 դարումը այն տղիսութեան սառոցին  
սկսաւ հալւել թէ և գեռ ոչ բոլորովին , կակղացան մոքի ոս-  
տերն և ծաղկեցան շատերն թէ հոգեորականներից և թէ աշ-  
խարհականներից լեզւագիտութեամբ և ազգային դպրու-  
թեամբ , թէպէտ և փոխանցւեցաւ ըստ մեծի մասին աշ-  
խարհականների մէջ . վասն զի բայցւեցան շատ տեղ աղբային  
ուսումնարաններ հայրենասէրների ձեռքով , սկսեց այս յառա-  
ջարիսութիւնն , բայց ազգի մեծ մասն գեռ մնումէ Արվիասի  
ձնի տակ . զի թէպէտ գարունն եկել է այն տեղերքում , և  
լուսաւորութեան արեգակն բարձրացելէ , բայց բարձրաբերձ  
տղիսութեան լեռաներ բռնումն նորա լցոյն . և մնումէ ան-  
հալ յիմարութեան սառոցը , և բանական այզին էլ առանց  
վարելու և սերմելու , վասն զի չկան այգեռաններ . ուսափ և  
ազգակելու ենք սաղմոս երգողի հետ . թէ “Կատուած զօ-  
րութեանց , գարձ . հայեաց յերինից և գարման տար այգւոյս  
այսմիկ , զոր տնկեաց աջքո , , (Աաղմ . կթ . 15) :

Մեր ազգից շատ քիչն են աւարտում ուսումն համալսա-  
րաններում , մանաւանդ զինուորական ուսումնարաններում  
ուսանողներն կամ բոլորովին մնուանումն լեզուն , կամ թէ մի  
քանի բառ հազիւթէ պահումն մտքում , մէկ մասն էլ սո-  
վորումէ Վիմազլերի մէջ , իսկ մեծ մասն գտւառական ու-  
սումնարաններում . որոց մէջ հայերէն լեզուազիսութիւնն և  
կրօնն չունի բաւական ժամկեր գասատութեան : Այո՛ Եւ-  
րոպայումն էլ մեծ մասն սարդին գասատուններումն են սովո-  
րում , բայց նոցա ամսագիրներն և լրագիրներն մեծ ազգեցու-  
թիւն ունեցան ընդհանուր ժողովրդեան ամենայն կարգի վե-  
մայ , և մեծ յարգանք և ձղտումն ստացան հասարակութենից ,

ուստի և օրէ յօր նոցա թիւն աւելանումէ , և ոչ թէ մերերի պէս ողակումէ , որովհետեւ նոցա անձզարարն էլ գոնէ մէկ լըազրի բաժանորդէ զրւում , որով միշտ լուսաւորումնն , իսկ մեր մէջ այդ եռանդն մեծ մասամբ դեռ ձնի տակնէ :

Այժմ ուսման արեգակն բարձրանումէ հորիզոնի վերայ , հալումէ տղիառութեան սառոյցը , և բուայնումէ լուսաւուրութեան ծաղիկներ , մինչև անդամ աղջկանց համար էլ բայց ուեցան ուստմնարաններ . թող թէ տղայոց համար գեղերումը , վասն զի աձմեռն էանց , այդիք մեր ծաղիկեցան և ծաղիկք երեւեցան յերկրի մերում , : Այժմ ուսման Գարուն է մեր աղզ զի համար , մեր այդիքն աւելի կծաղկին և մեր ծառելն աւ ւելի պտուղներ կտան , եթէ աշակերտ աղայոց համար պատրաստենք ամսաղիններ . և լրաղիններ , որ ինչպէս նոքա , նոյն պէս կարդացող վաճառականներն և արշէստաւորներն , ևս առաւել հոգեռորականներն ստանան լուսաւորութեան աւելի տեղեկութիւնք , իսկ անզրադէսներն ականջ գնեն կարդացողներին :

Մեր ամսաղրի անունը կոչեցինք ԳԵՐՈԽՆ , որ եկեղեցական , կրօնական , ուսումնական և բարօյական գիտութիւնների բուրաստաններից քաղելով ծաղիկներ , փունջ կապենք ամսաղրիս միջոցով , և ամեն ամիս ընծայենք մեր սիրելի եղբարց , ինչպէս Գարնան վարդի փունջ . և հետ զշեաէ ծաղկի մեր բուրաստանն , զոր բաժանում ենք չորս մարդ (կիվալ) :

Առաջն բաժանումն կրովանդակէ իւր մէջ հոգեռորական առարկայք պատմութիւն քրիստոնէկութեան և եկեղեցայ , Ճառեր , քարոզներ , ներբողներ , երեւելի սուրբ վարդապետների վարքապրութիւնք , թէ հին և թէ նոր հեղինակութիւնք կամ թարգմանութիւնք , թէ զրաբառ . և թէ աշխարհաբառ : Գրաբառն այն պահճառով ենք հրատարակում , մէկ՝ որ այդ արմատական և մայր լեզուն պահպանւի , որ աշխարհաբառի ծնողն է և կեանքն . և երկրորդ՝ որ մեր երանելի նախնեաց հատուկառ զրուածքները տպազրելով պահպաննենք նոցա ո՞նմուանալի յիշատակը : Այս բաժանմունքի հրատարակիլն այդ

նպատակով է, որ մինչեւ այսօր մեր ազգային օրադիմների մէջ թէ անցեալների և թէ ներկայիս չկան հոգեռորական, մանաւանդ եկեղեցական պատմութեան և արարողութեանց շարունակ յօդուածներ, որպէս զի մեր ազգն. և յատկապէս հոգեռորականներն ունենան աեղեկութիւնք ընդհանուր եկեղեցեաց վերայ կրօնական և արարողական մասին, և կարծեմ թէ մեծ օգուտ պէտք է տայ հոգեռորական դասին:

Երկրորդ բաժանումն կպարունակէ լումաններ, (բանաստեղծական պատմութիւնք) վիապատմութիւնք, զրոյցներ, համառօտ նկարագրութիւնք, տեղադրութիւնք, զբանեք, (թարոնական ձեռվ շինած պատմութիւն) տաճառարներ, թէ հեղինակութիւնք և թէ թարգմանութիւնք:

Երրորդ բաժանումն է մասենապատմեան աեսութիւն: Արան կվարաբերի կրիստիքական քննութիւն աւելի հայերէն երեւելի զրքերի և զրւածքների վերայ, որք ևն՝ դասական զրւրեանք վերաբերեալք կրօնին և եկեղեցական արարողութեանց և ծէսերին, Հայոց լեզուի գաղութեան, նոյնպէս ամեաղիբներին և լրագիրներին, նա և պատմաբանականներին: Այս քննութիւնն ունի երկու որայման անաշառ և անկողմնակի: Նաև զրւածքների օգաակար լինելն յայտնի խոստովանիլ գտառողութեամբ հանդերձ նորա օգուաների վերայ, և երկրորդ՝ եթէ գտանափ որ և իցէ սխալմանք, պահպանել զրելու մէջ համեստութեան կանոնները, ամենեին չղիսէլ զրողին, այլ սխալները ամենայն քաղաքավարութեամբ հանդէս հանել և ուղղել: Այս բաժանումն կունենայ և Պետազօդիկական (ուսումնական) յօդուածներ: Այս յօդուածներն թէպէտ օգուտ են մանր ուսումնարանների ուսուցիչներին, բայց աւելի աշակերտներին, որոց միտքը կբանայ լաւ հասկանալու վարժապեաների ասած դասերը, որ ուսանումն օսուր լեզուով դասազիրքերի վերայ:

Չորրորդ բաժանումն կոչվումէ ժամանակակից տեղեշութիւն: Աս բովանդակումէ 1) Տնական տարեղութիւն—

նելքին կեցութիւն Հայոց . սրան կվերաբերի ազգային սովորութիւնքը . 2) Պեղէտօն—երեւլի անձանց կենաւզրութիւնք :

Յանձն առնելով զայս առանց որ և իցէ շահախնդիր նպատակով , այլ յասկապէս մեր եղբայրակից հոգեորականների , ուսուցիչների և ծնողների համար , յոյս ունինք զրտնել նոցա մէջ բաւականին հետեղներ և մեզ օդնականներ ազգային լուսաւորութեան յառաջազիմութեան համար :

Մեր ամսազրի նիւթ աւողներին առաջարկում ենք հետեւալ պայմանները :

1) Նիւթն , զոր մենք կհաւանինք հրատարակելու , որովն իսանայ ամեն մէկ առազգրեալ կամենդարնի թերթի համար , հեղինակութեանը առան և հինգ մանեթ , իսկ թարգմանութեանը առան մանեթ :

2) Եթէ նիւթն բազկանայ չորս և կամ առելի կամենդարնի թերթից , և աելն կամենայ առանձին զբքոյկ կաղմել , կարողէ առաջին նւազին նիւթը ուղարկելու հետ յայանել մեզ իւր ցանկութիւնը , որի օգափ համար մեր ծախսով կրապել տանք հինգ հարիւր հատ , և այս միայն կլինի նորաաշխատանքի վարձն :

3) Եթէ զբուածքի մէջ զտանւի ում և իցէ անձնաւկան պատուին կծովական խօսքեր , այնպիսի յօդուածն կինայ առանց հրատարակելու . ուրեմն ասելէ , թէ ունայն տեղը ըռզարկեն :

4) Ազգային վերաբերեալ բաների մէջ , կամ որ և իցէ միաբանական կարգին , նոյնապէս չգործ ածել ոչինչ անարգական խօսքեր , և ոչ խասութիւն , այլ որչափ կարելին է պահպանել մեղմութիւն , զրել պակասութիւնքը և նոցա զէմ ուղղութեան կանոնները , և ընդ հակառակին աշխատանք չըքաշեն ուղարկելու , որ չենք հրատարակել :

5) Եթէ զբուածքներն վերաբերին պապականներին և լութերականներին , կամ թէ նոցա զբքերն քննուին , որք յատկապէս են կրօնի և արարողութեանց կամ տօնակատարութեանց

վերայ, պահպանել 3 և 4 յօդւածների պայմանները:

6) **Մենք** ոչ մէկի գրւածքը սրբագրելու չենք, և եթէ կրտակայ զրող լինի կհրատարակենք, այլ մեր պարտքն է նըշկատել, որ առաջարկեալ պայմաններն պահպանւած լինին զրողների կողմից,

7) **Մեր** զրուած յօդւածների վերայ արած նկատողութիւնքը մտքով, կհրատարակենք եթէ ուղղութիւն գանենք, մինչեւ անդամ հրատարակաւ չնորհակալութիւն կանենք, և մէկ քանիսի պէս յարձակմունքներ չենք անել, քաջ գիտելով թէ ամենայն ինչ աշխարհիս վերայ գեռ ևս չէ այն պէս կատրելագործած՝ որ ապագային ոչինչ ուղղութիւն չըպահնջէ, վասն որոյ և մարդս է ենթարկւած պակասութեան, և մէկ մէկու վերայ ունին առաւելութիւն և նուազութիւն, ուրեմն տրանջալու և յարձակելու բան չունինք, այլ մեր սխալը ուղղելու՝ եթէ այնպիսի զրուածներն իրաւացի կհամարւին:

Այս է մեր ամսագրի նպատակն և ուղղութիւնն, որ կարգացների գատասատնի առջեւ նախապէս կանգնած է:

**Որովհետեւ մեր ամսագրի հրատարակելու թոյլատութիւնը ՆՈՐԻՇԿԵՑՍԵՒԲԱԿԵՇՆԻՎՇՐՈՒԹԵՎՇՆ ՄԵԽԾ ԻՇԽԱԿՆ Փոխարքային Կովկասու բարեհաճութիւնը ստացանք անցեալ Յունվարի 5-ին Յենաուրնի Աօմիտէալից, ուստի հրատարակումն էլ չէր իւր ժամանակին, բայց մենք այս անդամին բաւականաշափ տպագրութենք, որ ցանկացող գանեղներուն եթէ պահնջեն պատրաստ ունենանք ուղարկելու:**

**Հրատարակիչ:**

# ԵՎԵԳԵՑԱԿԵՆ ՊԵՏՄՈՒԹՎԵՐՆ

## ԱԶԴԵՑՈՒԹՎԻՒՆԻ

Ազգի գլխաւոր շաղկապնէ կրօնն, որ մեկ շղթայով կապումէ ամենքին, և այս կապն այն ժամանակնէ ամուր, երբ որ ամենայն մարդ ունի կրօնական զգացմունք, —բայց ի՞նչ պէս կարող է ունենալ, եթէ նա չէ սովորել, կամ հոգևորականներն չեն ուսուցել։ Ոչ ապաքէն կրօնական զգացմունքն էր Ապրդանանց պատերազմի պատճառն, ի՞նչ էր Յունաց հալածմունքն Հայոց ազգի վերայ, ոչ ապաքէն քրիստոնեայք էին երկուքն էլ. բայց կրօնական խորութիւնն։ Ընչու կաթօլիկներն չունին ոչ մի յարակցութիւն միւս քրիստոնեայ ազգերի հետ, մինչեւ անգամ նոցա եկեղեցին չմննել, երկրպագութիւն և ազօթք չանել. եթէ ոչ կրօնականն. ի՞նչ է պատճառն որ ոմանք քրիստոնեայ ազգեր փոխանակ մեր Փրկիչ Յիսուսի Քրիստոսի հրամանը կատարելու թէ “Գնացէք այսուհետեւ աշակերտեցէք զամենայն հեթանոսա, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդույ և Հոգւոյն սրբոյ”, (Մատ. իր. 19): Ընկնում են կաթօլիկ և լուսերական միխանոներներն միւս քրիստոնեայ ազգերի մէջ քարոզել և դարձնել գէպի ի իրանց եկեղեցին։ Եւ այսպիսի անկանոն և հակառակ աւետարանական հոգւոյ ընթացքով ձգում են ազգի մէջ երկպատակութիւն, և անվախճան առելութիւն։ Առա ջանքն թէ և է հեթանոսներու, մահմէտականներու և Հրէից մէջ քրիստոնէութիւն սորբածելը, բայց մի և նոյն ժամանակ օտարազգի քրիստոնէիցն էլ գէպի ի իրանց եկեղեցին միաւորելու, որոց զլխաւոր միջոցն է զբամն, և ուրիշ տեսակ օդնականութիւնք. և համարեա՛ թէ զլխաւորապէս պարապած են այդ մասին Հայոց ազգի վերայ. աեւնելով թէ նորա հոգևորականութեան մէկ մասը անդէտ է կրօնին. մանաւանդ զիւղական քահանացից շատերն։ “Սա և ոմանք աշխարհական անձինք մեզանում, փոխանակ Հայոց երևելի ուսութիւնարաններում

տալու Հայազգի մանուկներուն ուսանել իրանց եկեղեցւոյ ուղղափառ վարդապետութիւնը, ուղարկում են Գերմանացւոց ուսումնարանները. ուր ուսանում են նոցա զանազան Աստուածաբանութիւնքը և նոցա կրօնը, և ապա յետ գալով իրանց հայրենիքը սկսում են ոմանք սերմանել Գերմանացւոց վարդապետութիւնը ազգի մէջ և պատճառել երկպառակութիւն :

Ուրեմն ե՞նչն է կրօնավոխութեան պատճառն. — Եկեղեցական պատմութիւն չդիտենալն է, որովհետեւ զլխուորապէս լութէրականք ոչ թէ դաւանութեանն են դիպչում, այլ եկեղեցական արարողութեանը, և կրօնական մի քանի մասունքներին, (առա վերայ առանձին կիսուինք), իսկ կաթոլիկներն դաւանութեանը և տօնակատարութեանցը : Ուստի յայտնի կարող ենք ասել թէ ազգութեան և եկեղեցւոյ միութեան պահպանողն է զլխուորապէս եկեղեցւոյ ներքին հանդամանքների պատմութեան զիտութիւնն :

Կրօնական կամ Աստուածաբանական ուսումն ոչ երբէք չէ ուսուցանում եկեղեցական խորհրդակատարութեանց և միւս արարողութեանց պատմութիւնը, այլ զայն, որ ինչ վերաբերում է կրօնին, թէպէտ մեր մէջ չկայ դեռ ևս լրիւ Աստուածաբանութիւն, այլ եղած կրօնազիտութիւնքն կամ քրիստոնէական վարդապետութիւնքն են բոլորովին թերի և անհասկանալի, որովք չէ կարելի ուսուցանել այս առարկայն, իսկ եկեղեցական պատմութիւն ամեններն չկայ, և թէպէտ Տփիսիսու. Աերսիսեան ուսումնարանումն, և Առոկւայի Լազարեանց Ճեմարանումն ուսուցանում են եկեղեցական պատմութիւն, բայց ոչ թէ ազգապահ զրքի վերայ, այլ դասաթերթերով, պատճառ որ, նախ՝ թէպէտ մեր մասենազիրներն զրել են ազգային պատմութիւնք, բայց քաղաքականը, որի հետ խառն են և եկեղեցւոյ արտօքին պատմութիւնքը, այն է կաթողիկոսների, հաւատի հաղածմունքների, սուլթանի նահատակութեանց, մատենազիրների, ալեքսական և ազ-

գային ժողովքների , իսկ ներքին հանդամանքների համար թէ ո՞ր հիմունքների վերայ են հաստատուած եկեղեցւոյ խորհրդակատարութիւնքն և միւս արարողութիւնքն ամենեին չեն զրել , երբ զլիսաւոր հարկաւորութիւնքն սոքա են , ըստ որում զլիսաւոր վէճներն սոցա վերայ են . և չդիտենալով այս ամենքի աղքիւրներն՝ ի՞նչ պատասխան կարող ենք տալ . — ոչինչ . ապա ուրեմն մեր հակառակորդների խօսքերին հետեիլ և կրօնափոխ լինիլ . մանաւանդ որ փող էլ են տալի :

Եւ գուցէ ասեն ոմանք թէ կան մեր մէջ էլ եկեղեցական պատմութիւնք . մէկն ։ Փափազեանցի տպած Ա է նէտիկում . և միւսն ։ Գալթը ձեանցի տպած Ա իէնայում . որ այս եկրորդի աշխատասիրութիւնն է թէպէտ տիեզերական պատմութիւն , բայց քաղաքականի հետ առանձին զրել է և եկեղեցականը : Այժմ սիրելի ընթերցող . թէպէտ այն երկու անձինքն էլ աշխատասիրել են այդ զիաքը հայերէն լեզով . համարէ՞նք արդեօք թէ մեր եկեղեցւոյն վերաբերեալ պատմութիւնքն ուղիղ են . — ոչ երբէք . վասն զի 1) գրւած են կաթոլիքական եկեղեցւոյ հողւով . որոց մէջ շատ սակաւ են ճըշմարտութիւնքն համեմատելով ստոյգ պատմութեանց հետ . 2) աշխատում են ։ ուոմայ եկեղեցւոյ պակասութիւնքը , սոցա նորածեւութիւնքը ծածկել և աւաղել . 3) ոչ թէ եկեղեցական պատմութիւն կարելի է ասել նոցա գրւածքները , այլ պատմութիւն ։ այսոց , Յունաց և ։ ուոմայ պատրիարքների վարքադրութեան , քրիստոնէից հալածմունքների , եկեղեցական վէճերի . մէկ խօսքով արտաքին հանդամանքների . 5) Կոսցա մէջ չէ կարելի գտնել առաքելական եկեղեցւոյ կամ առաջին չորս գարերի բոլոր քրիստոնեայ ազգերի եկեղեցւոյ միութեան ժամանակի ներքին հանդամանքները . այսինքն է՝ թէ եկեղեցւոյ խորհուրդներն ի՞նչպէս էին կատարվում Առաքելոց ժամանակ և ի՞նչ աւելացան միութեան ժամանակ . նոյնպէս պատարագի և կամ միւս եկեղեցական արարողութեանց ձեւերի կատարելու ասհմանալլութիւնքն երբ եղան . և ի՞նչպէս է-

ին կատարում. որ սոքա են իսկապէս եկեղեցական պատմութեան դլանաւոր մասունքների կաղմողներն. ապա թէ ոչ՝ Փափաղեանի և Գաթրձեանի պատմութիւններն զտնում ենք և քաղաքական պատմութեանց մէջ։ Այսկայն չենք կարող մեղադրել զնոսա չգրելու համար. որովհետեւ Հռոմայ եկեղեցին շատ ու շատ փոփոխութիւնք արաւ զանազան նորաձեւութիւնք մոցնելով խորհրդակատարութեանց և արարողութեանց մէջ, նա և շատ մնոտիապաշտութիւն եկեղեցւոյ մէջ, (զորս չենք թողնել առանց գրելու) նոյնպէս և դաւանութեան մէջ, որ մեծ մասամբ հակառակ է առաքելական սահմանագրութեանց։ Ուրեմն կաթօլիկների զրած պատմութիւնքն չեն կարող լինել մեր համար գասական գրքեր, ուստի հարկաւոր է մեր ուղղագրաւան եկեղեցւոյ ներքին հանգամանքների պատմութիւնը զրել ամենայն ճշգութեամբ՝ որպէս զի մեր ազգը կարդալով ճանաչէ իւր եկեղեցւոյ ուղղափառութիւնը և հաստատ մնայ իւր հաւատքի մէջ. և կրօնափոխներն յետ գառնան դէպ ի հայրենի եկեղեցին, բայց ի՞նչ անենք-զիրք չկայ որ կարդան, և եղածը ձեռագիրներ են, որք կարօտ են աղղային օգնականութեան տպագրելու մասին, ուստի ամսագրիս միջոցով կտպենք եկեղեցւոյ ներքին և արտաքին համառօտ հանգամանքները։

## ՀԵՄԱՓՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ:

Հիմնադիր և Գլուխ Եկեղեցւոյ Նոր ուխտի:

Հեթանոսութեան ծայրագոյն մոլութիւնն ակրելով աշխարհքի վերայ գարձաւ ընդհանրական հաւատ . մանաւանդ երբոր զօրացաւ Հռովմացեցւոց կայսերութիւնն ատրածեցաւ կուսպաշտութեան հետ և ամենայն չարութիւնք : Ծմէպէտ այս ժամանակում Հրէից ազդն, Վատուծոյ սեպհական ժողովուրդն գտանւումէր Վատուածպաշտութեան մէջ՝ բայց իւր ամրարշտութեանց համար ընկաւ միանդամայն Հռովմաց Եկեղեցւոց իշխանութեան ներքոյ :

Հրէից քաղաքական իշխանութեան բարձումն և գերութիւնն կերպարանափոխ արաւ Վատուծոյ եկեղեցին, որի մէջ մտան զանազան աղանդներ, և իւրաքանչիւրն դտաւ իւր կուսակիցներ, որով ընկաւ եկեղեցին ամենաթշւառ վիճակի մէջ. պատճառ որ Մեսիայի գալուստը աշխարհական մաքովէին հասկանում, որպէս թէ նա պէտք է գայ և աշատէ Խօրայէլացցւոց ազգը գերութենից և Հրէսաստանը օտարի ծառայութենից և նորոգել Հրէից թագաւորութիւնը, — աւելի էին յարդում սովորութիւնը քան զբարոյականութիւնը (Մատ. իգ. 23), — Վատուածային օրէնքները սահմանափակումէին արտաքին արարողութեամբ (Մատ. ե. 20 և այլն), — արդարանալու իրաւունքը սեպհական էին համարում միայն Վարահամու զաւակներուն (Մատ. գ. 9:), — Տաճարը դարձել էր առուտուրի տեղ (Մատ. իս. 12:), — Քահանայապետական փողովէին առնում այն իշխանութիւնը, երբեմն էլ աշ-

ըիւնհեղութեամբ, և շատ անգամ խլում էին միմեանցմէն  
Ծի Առ կտակարանի աեսանին երբեմն երկուքահանայապետք.  
Պուկ. գ. 2. որպէս և 'ի հինն Արքաթար և Սագովիկ:), —  
վարդապետները կոյր էին և կոյրերու առաջնորդներ (Մատ.  
ժե. 14:), — ժողովուրդն նման էր ցրւած և անհովիւ ոչխար-  
ների (Մատ. ժ. 6:): Փարիսեցիք պաշտպան էին օրինական  
կողմին, և հնութեանց և աւանդութեանց նախանձաւորներ,  
վասն որոյ նոցա վարդապետութիւնը ծանրաբեռնած էր մարդ-  
կային աւանդութիւններով: «Առքա ընկունում էին մեռելոց  
յարութիւնը — նոցա արտաքին կեանքը ջոկվում էր ուրիշնե-  
րից շուտ շուտ լւացմունքով, պաս պահելով, երկար ազօթ-  
քով, տասանորդներու Ճիշդ պահանջողութեամբ, շաբաթը  
պահպանելով, մեղաւորներից յետ քաշւելով, շորերու փեշերքը  
երկարացնելով, և իրանց զրապամակը\* լայնացնելով (Մատ. իդ.  
5): Իսկ Սագուկեցիք ուրանում էին հոգւոյ անմահութիւնը  
վարձը և պատիժը մահւանից յետոյ, մեռելներու յարու-  
թիւնը, նոյնպէս հրեշտակներուն և հոգիքը (Գործ. իդ. 8):  
Գալիւեացւոց կամ Գաւզոնացւոց ազանդը, զոր հիմնեց Յու-  
դայ անունով մէկ մարդ, և կոչւում էին նորա հետեղները  
նախանձախնդիրք (զելօդներ)՝ քարոզում էր թէ Կասու-  
ծոյ ժողովուրդը չպիտի ծառայէ կայսեր, և իւր անիւելքու-  
թեամբ ոչ միայն չկարաց պաշտպանել եկեղեցին՝ այլ և ըշ-  
տապեցրեց ժողովրդեան վերջին անկումը\*\*:

\* Գրապանակ նշանակում է զիր զնելու տեղ, որ նոքա  
օրէնքների երեւելի յօդւածները արտապրած՝ կախած ունէին  
կուրծքի վերայ:

\*\* Եյն աղանդի գլխաւորը յիշատակւում է Գործք առա-  
քելոցի մէջ. ե. 37, նոյնպէս զրում է և Պուկաս Աւետա-  
րանումը ժդ. 1. թէպէտ մութն է յիշում: «Սա յիշում է և  
մէկ ուրիշ գլխաւոր այնպիսի ժողովի Թմեգաս անունով:  
Գործք առաքելոց ե. 36:

Հրէից այսպիսի ողորմելի զբութեան մէջ կատարեցաւ  
Յակոբ նահապեատի մարդարէութիւնը, թէ “Մի՛ պակասեսցի  
իշխան ՚ի Յուգայ և մի՛ պետ յերանաց նորա, մինչեւ եկեսցեն  
նմա հանդերձեալքն, և նու է աինկալութիւն հեթանոսաց,,:

Օք թէպէտ Հրէայք դտանփումէին Հռովմայեցւոց ծա-  
ռայութեան լծի տակ, բայց Յուգայի ցեղից չպակսեցաւ իշ-  
խանութիւնը, որովհէտեւ Մակաբայեցիք իշխում էին Յու-  
գայեան ցեղին և Հերովդէս մեծն, որ էր օտարազգի՝ կարգ-  
ւելով Հռովմայեցւոցմէն թաղաւոր Հրէաստանի, իւր իշ-  
խանութիւնը անկասկած և ապահով պահելու համար ջնջեց  
բոլորովին Մակաբայեցւոց իշխանութիւնը, ձգեց Հրէից մէջ  
անմիաբանութիւնն և մոլորեցրեց հեթանոսական սովորու-  
թիւններով։

Երբոր Յուգայեան ցեղի իշխանութիւնը վերացաւ, այն  
ժամանակ ծնաւ խոստացած Մեսիայն, հեթանոսներու ա-  
կրնկալութիւնն Բանն Աստուած, առնլով մեր բնութիւնը  
սուրբ կոյս Մարիամից անշփոթ և անբաժանելի միաւորելով  
իւր Աստուածութեան հետ, երեսուն տարեկանն մկրտւեցաւ,  
և ապա յայտնեց իւր անձն աշխարհին խոնարհութեան և  
հեղութեան Ճանապարհով, Աստուածային վարդապետու-  
թեամբ, զանազան հրաշքներ անելով, և փրկարար չարչա-  
րանքով, խաչի վերայ մեռնելով, գերեզմանումը թաղւելով և  
Աստուածապէս յարութեամբ ապատեց մարդկային բնութիւնը  
դատապարտութենից, զրաւ նոր ուխտի եկեղեցւոյ անշարժ  
հիմը, մանելու Ճանապարհ բայց արաւ դէպ ի իւր եկեղեցին  
ոչ միայն Հրէից այլ և հեթանոսներուն։ Եկեղեցին բովան-  
դակեց իւր մէջ՝ ինքն լինելով նորա հիմն և զլուխ, և ան-  
բաժան նրամին մինչեւ աշխարհքի մերջը։ Իսկ համբարձման  
ժամանակը յանձնեց Առաքելոց եկեղեցւոյ շինութիւնը և տա-  
րածելը՝ իւր էակից և փառակից Առլրբ Հոգւոյ առաջնոր-  
դութեան ներքոյ, զոր խոստացաւ ուղարկել ինն օրից յետոյ,  
որ զատկից յիսուն օր է։

Մատաթիայի ընտրութիւնն: — Հոգւոյն Արբոյ գաւ-  
լուսան: — Առաջին եկեղեցին Երուսաղէմում:

Առաքեալքը, Աստուածամայրը, եօթանասուն աշակերտա-  
ները և միւս հաւատացեալները, որք էին հարիւր քասն հոգի  
Քրիստոսի համբարձմանից յետոյ սպասում էին անհամբեր  
սրտով նորա խոստմունքի կատարելուն՝ Սուրբ Հոգւոյ գա-  
լուսանը վերնատան մէջ, որ աել նոցա բնակութիւնն էր, նո-  
քա թէպէտ աչք բռնած մնում էին իրանց պատի փափաքին  
համնելու՝ բայց նախապէս հոգս արին լրացնել երկոտասանն  
առաքելոց թիւը, ընտրելով մատնիչ Յուդայի տեղ մէկին.  
ուստի Պետրոսի առաջարկութեամբ ընտրեցին հարիւր քասն  
հոգին իրանցմէն երկուսին՝ Մատաթիային և Յովսէփ Յար-  
սաբային, և վիճակ ձգելով՝ ընտրւեցաւ Մատաթիային և լը-  
րացաւ տաճներկու առաքելոց թիւը:

Յետոյ յիսներորդ օրը երբ ամենքը միատեղ ազօթք  
էին անում վերնատանը՝ Սուրբ Հոգին ընդունելու համար,  
յանկարծ երկնից մէկ ձայն եղաւ, սաստիկ քամու պէս եկած,  
ու լրեց բոլոր տունը, ուր որ նստած էին 120 հոգի հաւա-  
տացեալներ: Եւ երեւեցան նոցա լեզուները բաժանւած որ-  
պէս թէ կրակէ ու ամեն մէկի վերա նստեցաւ, և սկսեցին  
խօսիլ ուրիշ ուրիշ լեզուներով, ինչպէս որ Հոգին տալիս էր  
նրանց խօսիլ: Եւ սրովիշեաւ Պենտեկոստէի տօնն էր, այսինքն  
տասն պատգամների տալու օրն, Հրէից մեծ բազմութիւն ժո-  
ղոված էին Երուսաղէմի մէջ, և ուրիշ ազգերից էլ, լսելով  
այս ձայնը՝ ամէնքն էլ զիմեցին դէպ ի Առաքեալքը: Զար-  
մացկատար էին եղած նոցա զանազան լեզուներով քարոզու-  
թեան վերայ: Կանգնեցաւ Պետրոս տաճնումէկի հետ մէկ-  
տեղ և սկսաւ առաջին քարոզութիւնը, ու գարձրեց դէպ  
՚ի Քրիստոս երեք հազար հոգի: Միւս Առաքեալքը տես-  
նելով այս՝ սիրտ առան և սկսան միաբան քարոզել Երուսա-  
ղէմի տաճարումը, և աւելանում էին հաւատացեալները նո-

ցա վարդապետութեամբ և նշաններով, և երբ Պետրոս Յովեաննէսի հետ բժշկեց տաճարի զրանը մօրից կաղ ծնածին, և ժողովուրդը զարմացած էր այն գործողութեան վերայ, յայնժամ Պետրոս միւս քարոզութեամբ դարձրեց հինգ հազար հոգի, թէ և մի և նոյն ժամանակին բռնւեցան բանառումը: Միւս օրը կանգնեցան քահանայապեանների և Հրեցից իշխանների առջեւ և առանց ահի խոստովաննեցան Քրիստոսի Աստուածութիւնը, և յետ դասնալով իւրայնոց մօտ պատմեցին անցքը: Եւ երբ որ աղօթք էին անում, ցոյց տւառնոցա Աստուած իւր օգնականութեան նշանը, վասն զի շարժեցաւ այն տեղը, ուր ժողոված էին, և լցւեցան ամէնքն Սուրբ Հոգութ և համարձակ խօսում էին Աստուածոյ բանը: Հաւատացեալները մէկ սիրոյ կապով շաղկապւած էին, և բաղկացնում էին մէկ սիրոտ և մէկ անձն, և ոչ ոք չէր ասում իւր ունելիքի համար, թէ իմնէ, այլ նոցա ամենայն կայքը հասարակաց էր, և արծաթասէրները պատժվում էին մահով, ինչպէս Անանիա և Սափիրա:

Քահանայապեանները և Սարկուկեցիքը տեսնելով այն ամենայն սքանչելիքը, որ լինում էին Առաքելոց ձեռքով, և եկեղեցւոյ օրէ ցօր բազմանալը զրին զնոսա բանուումը, և Աստուածոյ հրեշտակը բացեց բանտի զնները, ու հանեց, միւս օրը երբ քարոզում էին տաճարի մէջ քաշեցին տաեան և ապատեցան սպանելուց օրէնսուսոյց Պատմաղիէլի ձեռքով, բայց ձեծեցին ու արձակեցին (Պող. Առաք. ա. 5):

Սարկաւագաց ընարութիւնն .— սուրբ Սաեփանոսի նահատակութիւնն .— Պաւղոսի դարձն .— Եկեղեցւոյ աճին Պաղեստինում և Ասորոց աշխարհում:

Հաւատացեալները ունէին հասարակաց սեղան, և Յոյները արտօննջ արին Եբբայեցւոց վերայ, որովհետեւ նոցա որբեարիններն միշտ արհամարտած էին լինում սեղանի ծառայութեան մէջ: Առաքեակքը լսելով այս բանը և տեսնելով՝

որ սեղանին ծառայելը արդելք է լինում քարովութեան, ուստի նոցա առաջարկութեամբ ընարկեց բազմութիւնը եօթն հողի, որոց վերայ ձեռք զրին Առաքեալք աղօթք կարդալով, և կանդնեցրին սեղանի ծառայութեան մէջ: Այս պաշտօնը եղաւ քահանայագետութեան երպորդ աստիճան, որ է սարկաւագութիւն:

Այս եօթն սարկաւագներից մէկն եր Սահմանոս, ինքն շնորհքով լիքը մեծ մեծ նշաններ եր անում, և մի քանիսը Նրէիցմէն չկարողանալով հակառակիլ նորա իմաստութեանը՝ լցւած նախանձով մատնեցին զնա ատենին ինչպէս հայհոյող Աստուծոյն և Մոլսէսին, ուր սքանչելի ատենաբանութիւն անելուց և խոստովաննելուց յետոյ Յիսուս Քրիստոսին՝ աղաղակեց, թէ ահա տեսնում եմ երկնքը բացւած և Յիսուսին Նօր Աստուծոյ աջ կողմը. զոր լսելով բազմութիւնը քարկոծեցին զնա: Ազա մեծ հալածում վերկացրին Նրէայք քըրիստոնէից վերայ, և ամենքը ցըւեցան Նրէաստանի գեղերը և Սամարիայի կողմերը բաց ի առաքեալներից:

Այս ժամանակ մէկ Փարիսեցի երիտասարդ Սոլոս անունով Վլեկիայի Տարան քաղաքից, ինքն սաստիկ նախանձախնդիր մովսիսական օրէնքների, զնալով Դամակոս քաղաքը քահանայագետի թղթով, որ քրիստոնէիցը կապած բերէ Երուսաղէմ, ճանապարհին յանկարծ լոյս փայլատակեց նորա վերայ երկնքից և նո կուրացաւ, ընկաւ գեանին և լսեց ահաւոր ձայն, թէ «Առ' լուղ, Առ' լուղ, ընչո՞ւ ևս հալածում զիս,, և յետոյ Տիրոջ հրամանով մտաւ այնպէս կոյր Դամակոս քաղաքը և մկրտեցաւ Անանիա Առաքեալից ու բացւեցան աչքերը: Այս անցքը պատահեցաւ Քրիստոսի 37 թւին, և այնուհետեւ եղաւ այնչափ նախանձաւոր և ջերմեռանդ քարովել քրիստոնէութեան, որչափ որ առաջ սաստիկ հալածող էր, ու Դամակոսի եկեղեցին աւելի աճում էր և զօրանում նորա ձեռքով, և այնչափ փառք ու պատիւ գտաւ հաւատացեալների մօտ, որ նորա կեանքին զգուշանում էին,

մի գուցէ Նրէայքը սպանեն, վասն որոյ և թաքուն ուղարկեցին երուսաղէմ, և այս տեղէլ Յօյներն մի և նոյն մաքի լինելով հեռացրին դէպ ի իւր հայրենիքը Տարառն քաղաքը:

Փիլիպպոս սարկաւագը Ստեփանոսի քարհոծւելուց յետոյ զնաց Սամարիա և շատերին մկրտեց: Առաքեալքը լսելով զայն ուղարկեցին այն տեղ Պետրոսին և Յովհաննէսին տալ նորանց դրոշմի խորհուրդը, որք զալով և ձեռք զնելով նոցա վերայ՝ ընկալան Սուրբ Հոգին: «Սոր հաւատացելոց հաշվումն էր և Արմեն մողը, աս տեսնելով թէ Առաքելոց ձեռք դնելով ընկալնումէն Սուրբ Հոգին: Փող բերաւ նոցա համար և խնդրեց տալ իրան այն իշխանութիւնը, բայց նոքա նախատանօք մերժեցին զնա իրանցմէն, և թողեց իւր համար յաւիտենական անարդ անուն Արմոնականութիւն, այսինքն է կաշտոքով ասնուլ ձեռնադրութիւնը:

Իսկ Փիլիպպոսին, Աստարացւոց լուսաւորելուց յետոյ, ուղարկեց Սասուած ուրիշ հեռու տեղեր քարոզելու: «Կա հրեշտակի պատեիրելով զնաց Փազա, և ճանապարհի վերայ մկրտեց Եթովզացւոց Ասմղակ թագուհու ներքինուն, ու յետոյ յափշտակեց զնա հրեշտակը ու տարաւ Ազովոս, և շրջելով քարոզումէր ամեն քաղաքներում մինչեւ որ հասաւ Փիլիպպեաց Աստարիա քարտաքը, ապա ձեռնադրուելով Առաքեալներից զնաց Ասիացւոց Տրաղ քաղաքը, որ է Միանդ գետի ափը Ասիացւոց և Լիւրացւոց մէջ, ուր հիմնելով եւ կեղեցի՝ նահատակւեցաւ մի քանի ժամանակից յետոյ:

Այս ժամանակում Պետրոս տռովջայրեց Լիւդէումը ութն տարւայ անդամալու ծին Ենա անունով, և Յոպակումը յարութիւն տւաւ Տարիիթայ կնոջը մեսելութենից: Այս քաղաքներումը կային հաւատացեալներ, բայց աւելի բազմացաւ հրաշքների պատճառաւ. (Պործ. առաք. Օ—Թ.):

Նեթանոսներու եկեղեցին Անապիս և Անտիռք  
քաղաքներումը:

Պետրոս ինչ ժամանակ Յոսպաէ քաղաքում աղօթք եր  
անում, Աստուած յայտնեց նրան և հեթանոսներու եկեղեց-  
ւոյ համար կոտաէ զամբիւղի նմանութեամբ, որ լիքն էր ա-  
մենայն կենդանիքով, և երեք անգամ ձայն լսեց երկնքից, թէ  
«վերկա՞ց Պետրէ, մորթի՞ր ու կե՞ր,» հազիւ թէ վերջացաւ  
տեսիքը, և աչա աեսաւ երեք մարդ ուղարկւած Խաւալաց-  
ւոց գնդի Առունելիսա հարիւրապեաից, որ հրեշտակի խօս-  
քով կանչում էր զնա իւր մօտ, և Հոգին հրամայեց նրան  
գնալ, մտնել այլլազդու տունը, քարողեց այն տեղ ժողոված-  
ներին Աւետարանը, ու խօսելու ժամանակը իջաւ Սուրբ Հո-  
գին ամենքի վերայ, և մկրտեց զնոսա: Երուսաղէմի հաւա-  
տացեաները լսելով թէ Պետրոս մտել է հեթանոսի տուն՝  
տրանջացին նորա վերայ, բայց յետոյ իմանալով Աստուածոյ  
յայտնի շնորհը և հեթանոսներու վերայ՝ փառք տիմն Աս-  
տուածոյն: Ապա Երուսաղէմի եկեղեցին լսեց թէ Ստեփանո-  
սի նահատակւելուց յետոյ մէկ քանիսը հաւատացեաներից  
հիմնել են Անտիռք քաղաքում եկեղեցի, ուղարկեցին այն աեղ  
Բառնաբասին: Այս շատացրեց հաւատացեաների թիւը, և  
Պաւղոսի հետ մէկ ամբողջ տարի սովորեցնում էին ժողովար-  
դին, և այն տեղ բնկալան նախապէս քրիստոնէայ անու-  
նը\*: Այս ժամանակում Եղարսո մարգարէն զուշակեց մէծ  
սովի ընկնիլը ամեն աշխարհքում, և կատարւեցաւ Պղողէս  
կայսեր օրով, և այս սերտ սիրով կապեց Անտիռքայ եկեղե-  
ցին Երուսաղէմի եկեղեցւոյ հետ՝ ուղարկելով նոցա համար  
փող Բառնաբասի և Պաւղոսի ձեռքով:

Փրկչական 44 թւին Հերովդէս Երդինդապաս Հրէից  
հաճոյանումը համար սպանեց Օերեթեայ որդի Յակոբոսին,

\* Պաւղականք և ուրիշներ ասում են թէ Պետրոս հիմնեց  
Անտիռքայ եկեղեցին, բայց վերեկի բանը ստումէ նրանց:

նոյնպէս ուզում էր սպանել և Պիտրոսին բայց Տիրոջ հրեշտակը հանեց կնա բանտից . (Պործ . առաք . ժ . 12) :

Պաւղոսի առաջին ձանապարհորդութիւնն :

Երբ որ բոլորովին հաստատեցաւ Անտիռքայ եկեղեցին, այն ժամանակ Բառնաբաս և Պաւղոս Հոգովոյն սրբոյ հրամանով սկզբն արին (45 և 46 թվին) մեծ ձանապարհորդութիւնը դէպ 'ի Աելեկիա , այն տեղից Ափսրոս և Պափոսումը կուրացնելով Բարեյեսու մոգին՝ գարձրեց Պաւղոս այս հընաշքով Աերդիոս Պաւղոսին որ էր բգեշխի փոխանակ , և կարելի է որ բարեկամութեամ նշանի համար Աօղոսը կանչեցաւ նորա անունով Պաւղոս , յետոյ գնացին դէպ 'ի Պամփիլիա և Պիսիդեայ Անտիռքի քաղաքը , աստ Պաւղոս յօժարեցրեց հեթանոսներին լնովունել իւր քարոզութիւնը , բայց Հրէայք հալածանք վերկացրին նոցա վերայ , որք թափ տալով ոսների փոշին եկան Իգնիոն , և շատերին դարձրին Հրէիցմէն և Յունացմէն , սակայն կրկին վերկացաւ անշաւատ Հրէիցմէն խոռովութիւն , մինչեւ որ առիպւեցան փախչել դէպ 'ի Աեկայոնիա , և երբ նորա Աեւստրա քաղաքումը բժշկեց Պաւղոս մօրից ծնած կաղին՝ հեթանոսներլու համարեցին զնոսա աստուածներ , ուստի Պաւղոսին կանչում էին Հերմէս և Բառնաբասին՝ Դիոս , ու զոհեր էին բերում նոցա համար , որք հազեւ կարացին արգելել : Ամեն տեղ ընդունում էին նոցա քարոզութիւնը , բայց Հրէից մէկ մասը հալածումէր զնոսա ապա Դիերէ քաղաքումը աւետարանելուց յետոյ շարունակեցին իբանց ձանապարհորդութիւնը , և ինչ տեղով որ անց էին կենում ձեռնապրում էին նոցա համար քահանայք , և Ատաղիայով դարձան Ատրւոց Անտիռք քաղաքը , ուր հաւատացեալների մէջ հակառակութիւն կար Առվախական օրէնքը պահելու համար , զի Հրէայք հեթանոսներից դարձածներին ստիպում էին թղփառւիլ , այս պատճառաւ Անտիռքայ եկեղեցին ուղարկեց Պաւղոսին և Բառնաբասին Եր-

ըռուսաղէմ (52 - 54 թւին) և ժողովեցան Առաքեալք և էրէցները, և սահմանեցին, որ հեթանոսներուն չսափակել Մովկահան օրէնքը պահելու, այլ հրաժարւին կուռքերին դոհինելոց, արիւնից, խեղգւածը չուտել և պունկութենից . (Պարծ. առաք. ժդ. 15):

Պաւղոսի երկրորդ ճանապարհորդութիւնն : :

Երրուսաղէմի ժողովքի վճիռը բերելուց յետոց Անտիոք առաւ Պաւղոս երկրորդ ճանապարհորդութիւնը (52 կամ 54 թւին), Բառնաբաս բաժանեցաւ նրամէն, և իւր ազգական Յովհաննէս Մարկոսի հետ զնաց Ափառոս կղզին . իսկ Պաւղոս Շխղայի հետ Ասորւոց և Աիլիկիայի կողմերը պարսեց, հասնելով Դերբէ և Լիւստրա առաւ իւր հետ Տիմօթէոսին, շրջումէր նոցա հետ Փուիւգիայի, Գաղատիայի, Միստիայի և Տրովագայի երկիրները, այս ճանապարհորդութեան մէջ չկարողացան քարոզել Ասիայի և Ծիւթանիայի մէջ, և հասնելով Մակեդոնիա հասաւաեցին Փիլիպական քաղաքումը եկեղեցիք, և երբ որ մէկ ազախինից հանեց հարցուկ գեր, ընկաւ խոռովութիւն ժողովսգեան մէջ, և ծեծելով զրին բանտումը . բայց զիշերը ժամի ազօթքից ժամանակ շարժեցաւ բանտը հեմքեց, բացւեցան լուները և շղթաները, բանտապետը զարմանալով այս հրաշքի վերայ՝ մլլատեցաւ ընտանիքով : Թեսաղնիկէ քաղաքումը անհաւատ չըրէայքը քաշտւենին, որ Պաւղոսին ընկալել էր իւր տանը . նոյն պէս Ծերիայի մէջն էլ ուր հեռացել էր, նորս ետեից էին ընկած, բայց Ալիսահնամանութիւնն ամենայն տեղ օգնումէր նրան քարոզութեան մէջ : Թողնելով այն տեղ Շխղայինու Տիմօթէոսին զնաց նաւով Աթէնք, և քարոզում էր Արիապագումը մէկ անձանօթ Աստուած, և ուր շատերը հաւատացին, որոց հետ և Դիոնիսիոս Արիսպագային : Յետոյ հասաւ Կորնթոս, ուր ընկալաւ զնա մէկ հաւատացեալ չըրէայ Ակիւղաս անունով, կացաւ այն տեղ տարի ու կէս Տիրոջ հը-

բամանով, և յետ դառաւ Եփեսոսի և Անսարիու վրայօք միւս  
անզամ Անտիոք. (Գործ. առաք. ժա. 18. Ժը. 22):

**Պաւլոսի երրորդ ճանապարհորդութիւնն :**

**Պաւլոս սկսաւ երրորդ ճանապարհորդութիւնը Անտիոք**  
դալուց յետոյ գէպ ՚ի Փոքրն Սախա (55 կամ 57 թւին), և  
Փոխողիայի ու Գաղատիայի եկեղեցեաց այց անելով գնաց  
Եփեսոս, ուր քարոզում էր երկու տարի առելի, հրաշքներ  
անելով Ասիոյ բգեշնութեան մէջ, մինչ զի և երդմնեցուցիչներն  
որ Նըմեցմէն էին՝ **Պաւլոսի քարոզութիւնը լսելով**, զիւա-  
հալներին երդում էին տալի Յիսուսի անունով, և Աստծոյ  
բաներ աճում էր և զօրանում էր նոցա մէջ. բայց մէկ արծա-  
թագործ Դեմետրիոս անուն, որ Արտեմիս կուռքի պատկեր-  
ներն էր շնուրմ, տեսնելով թէ կուռքի պաշտօնեայքը օրէ  
ցօր պակելով իւր արհեսար ընկնումէ, սկսաւ ամբոխի մէջ  
խոռոշութիւն ձգել, իսկ **Պաւլոս գնաց Մակեդոնիա-և Յու-  
նաստան:** Տրովադայ, քաղաքումը յարութիւն տւաւ Եւտի-  
քոսին, որ տան երկրորդ դատիկոնից (Էտաժից) ընկել էր:  
**Մելիսիայումը կանչեց իրիցներուն**, տւաւ նրանց խրատ ու  
հրաժարական ողջոյն, մարդարէացաւ այն անցքերի վերայ՝  
որ պիտի կատարել էին իւր վերայ Երուսաղէմի մէջ: Այ-  
ցելութիւն անելով Տիւրոսի և Պաղոմայիդի եկեղեցեաց՝ զր-  
նաց Անսարիա, այն տեղ Ազարոս մարգարէն պատմեց նրան  
անցքերը՝ ինչ պիտի անցել էին նրա հետ Երուսաղէմում,  
բայց **Պաւլոս ճանապարհ ընկաւ գէպ ի Երուսաղէմ**,  
(66 կամ 68 թւին) ուր հանելով պատմեց Յակոբոսին, Ան-  
փասին և Յովհաննէսին, որք կարծւած սի ներն էին  
(Գաղ. բ. 1—9). և իրիցներուն՝ ինչ որ Աստուած արտ  
հեթանոսներու մէջ: Այս տեղ նոցա խօսքով սակրելով (վեր  
անելով) զլուխը՝ չորս ուխտաւորների հետ՝ մտաւ տաճարը.  
բայց Փոքր Սախացի Նըմեցմէյքը յարձակւեցան նոցա վերայ՝  
ինչպէս օրէնք անարգողների վերայ, և բռնւեցան նրանցմէն,

ու հաղթւ սլրծան Նռովմայեցւոց հաղարապետի ձեռքով, և  
կրկին շղթաներով կապւեցան։ Պաւղոս հաղարապետի պաշտ-  
պանութեամբ երկու անդամ խօսեցաւ Նըրէից հետ, բայց  
նորա խօսքը կիսատ մնաց ժողովրդեան խոռվութեան աղա-  
ղակներով. այս ժամանակ Աստուած յայտնեց նրան՝ որ պիտի  
Նռումնւմն էլ վկայէ, ինչպէս որ վկայեց Երուսաղէմում։  
Յետոյ ծածուկ տարան Կեսարիա քաղաքը Փելիքս դասա-  
ւորի մօտ, սա թէպէտ լսեց երկու կողմից վէճը՝ բայց չար-  
ձակեց Նըրէից հաջոյանալու համար, և մնաց կապւած եր-  
կու տարի. և այս ժամանակին Փելիքսի տեղ եկաւ Փետոս,  
և Պաւղոս խօսելով նորա ատեանի մէջ Ազրիապաս թագա-  
ւորի ներկայութեամբը բողոքեց դէպ ի կայսր, և այս պատ-  
ճառաւ ուղարկեցին զնա պահապաններով Նռոմ, (69 կամ  
71) ուր գտաւ շատ հաւատացեալներ, և երկու տարի քա-  
րողում էր նրանց տան մէջ։ Այս տեղ աւարտումէ Պուկան  
Գործք առաք ելոց պատմութիւնը. (Գործ. առաք. ժը.  
—իը.): Եւ այսպէս Պաւղոս կանչւեցաւ հեթանոսների  
Առաքեալ։

Հաղմերախառ Դաստիարակ իմ

Սահմանաս Աւագ Քահանայ Մանդինեանց

Չեր հրապարակական և տնական բանախօսութիւնը Տէրունական ազօթքի վերայ՝ ևս մեծ ուշադրութեամբ ականջ էի գնում ինչպէս դասաւան մէջ, և իրրե նիւթ ունենաւ լով Չեր ասածները իմ գաղափարի համար՝ որչափ իմ մոքի կարողութիւնն հասաւ՝ զրեցի այն ազօթքի մեկնութիւնը, ուստի մատուցանում եմ Չեր իրրե առաջին պառող Չեր դաստիարակութեան և իմ ուսման :

Չեր հարազատ որդեգիր Արքար  
Տէր Յակոբեանց:

Է 18. Յունվարի 1866 ամի :

Տէրունական ԵՊ.ՕԹ.Բ.Դ.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Հին ժամանակ կրօնական ուսուցիչների պաշտօնն էր՝ ուսուցանել աշակերաներին ազօթք, որպէս և այժմ է այդ սովորութիւնը, որով մերձեցնէ մարդոյն Աստուծոյ մօտ, և շարժէ ջերմեռանդութիւնը դէպ ի Աստուծութ : Եւ Քրիստոս ինչպէս հիմնալիր և ուսուցիչ՝ Նոր Եկեղեցւոյ կրօնի, Կաէլ իւր աշակերաներին սովորեցրեց մի կարձ ազօթք, ինչպէս Առկաս պատմում է (Ժա . 1): Երբ Քրիստոսի աշակերուները աեսան, որ Յովհանէս մկրտիչն իւր աշակերաներին ազօթք է սովորեցրել, վասն որոյ ինդրեցին Քրիստոսից, որ Կաէլ ուսուցանէ իրանց ազօթք : Յովհանէսի սովորեցրած ազօթքը մեզ անցայտ է, սակայն նա լինելով կարապետ և յա-

ուաջնթաց Քրիստոսի, նորա ամենայն գործն էր պատրաստել Տիրոջ ճանապարհը ընդունելու Քրիստոսին։ Մի միայն Քրիստոսի սովորեցրած աղօթքն է մեղ յայտնի, որ շատ զերազանց կլինի Յովհաննէսի աղօթքից՝ ինչպէս Քրիստոս ինքն զերազանց էր Յովհաննէսից. զի Նա Արարիչ էր և սա արարած։ Քրիստոսի սովորեցրած աղօթքն կոչումէ Տէրունական աղօթք, թէպէտ ինքն շատ համառօտէ, սակայն իւր մէջ պարունակումէ ինչպէս մեր ամենահարկաւոր կարիքների խնդրամաժքը և նոցա կատարումն՝ նոյնպէս Աստուածային փառքը և նորա փառաբանութիւնը, այլ սակայն արգելք չէ լինում և մեր միւս աղօթքներին, թէ հրապարականին և թէ առանձնականին, վասն զի ամենայն աղօթքի միտքը նրանից է բղխում, ինչպէս մէկ զլխաւոր աղբիւրի ակնից, և այս պատճառուաւ մեր հասարակաց Աստուածապաշտութիւնը սկսում ենք և վերջացնում ենք Տէրունական աղօթքով՝ որպէս երկու ծայրերի մէջ բովանդակելով մեր հրապարակական աղօթքը և փառաբանութիւնը, որպէս թէ բղխելով նրանից և գարձեալ նորա մէջ զետեղւելով՝ ինչպէս ծովն գետեր է բղխում իրանից, և գարձեալ իւր մէջ է ընդունում։ Այժմ տեսնենք թէ Քրիստոս ի՞նչ էր կամենում ուսուցանել իւր կարճ և ազգու աղօթքով։ «Նկարագիրն լինելով համառօտ և մի և նոյն ժամանակին դժւարահասկանալի է նորա ճապաղիմասար, այլ այն ժամանակ կիմանանք նորա զերազանց միտքը, երբ կըննենք նորա ամենայն խօսքը ոչ թէ բառ ական նշանակութեամբ, այլ ամենայն պարբերութեան մէջ գտնուած ազգու և բարձր իմաստները։

Տէրունական աղօթքն իւր իմաստով բաժանումէ չորս՝ Առաջննն է յառաջարանութիւն, որ զարթեցնումէ մարդոյ միտքը և ձգտում է գէպ ի Աստուած տաելով «Ճայր մեր որ յերկինս ես,, :

Երկրորդ՝ փառաբանութիւն, «Առուրբ եղիցի անուն Քո»:

Երկեցէ արքայութիւն ՚Քո Եղեցին կամք ՚Քո որպէս յերկինս  
և յերկին :

Երբորդ՝ երեք խնդրուածք, որք են “զարաց մեր հանաւ  
պազորդ տուր մեզ այսօր : Եւ թող մեզ զպարտիս մեր, որ  
պէս և մեք թողումք մերուց պարապանաց : Եւ մի՛ տա-  
նիր զմեզ ՚ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ՚ի չարեւ :

Չորրորդ՝ վերջաբանութիւն, որէ գոհաբանութիւն և  
խոստովանութիւն Ըստուածային կարողութեան, և մեր կող-  
մից հպատակութիւն և հնազանդութիւն : “Օք ՚Քո է ար-  
քայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս :

Ուստի սկսենք բացատրել համառօս և սովորել մեր երկ-  
նաւոր Վարդապետի աւանդած ազօթքի միտքը .—միտքը, ո-  
րոյ մէջ պարունակումէ մեր ներկայ և ապազայ երջանկու-  
թիւնը :

## ՅԱՅՍ. ՅԵԲԱԿԱՄԻԹՅՈՒՆ

### Հ Ե Յ Ը

Մեր Փրկիչ Յիսուս ՚Քրիստոսն աղօթքի սկիզբն ՀԵՅՅ  
բառով սկսեց : Մի՞թէ մարդն չպէտք է զարթնի այս կոչու-  
մով, ՀԵՅՅ . մի՞թէ նորա սրտի մէջ ազգեցութիւն չպէտքէ  
ունենայ, երբ իւր Ըստուծոյն Հայր է անւանում, մի՞թէ  
ծառայն կարողէ իւր տիրոջը հայր կոչել, քանի՞՛ համարձա-  
կութիւն է տալի մեզ մեր Փրկիչն դէմ ՚ի Ըստուած, որ ոչ  
թէ միայն Տէր է, այլ և Ստեղծող և ՚Ստիախնամող աշխարհի:  
Եւ ինչի՞ համար մարմնացեալ Ծրարիչն՝ Հայր է կոչել տալի  
Ըստուծոյ, չէ՞ որ միայն ինքն է Որդի միածին իւր Հօր,  
իսկ մէնք հողեղին արարածներ : Ըստ՝ նա էր միայնակ Ըս-  
տուծոյ որդին, բայց մարդս ստեծած լինելով Ըստուծոյ իշ-  
խանական պատկերի և նմանութեան՝ իշխումէր արարածների  
վերայ, որպէս ժառանդ իւր Ծրարիչն “Ստեղծենք մարդ մեր  
պատկերի և մեր նմանութեան, որ աիրէ . . . . ամենայն  
երկրին,, (Օհն. տ. 26): Ըստէս՝ ինչպէս մեր որդիքն մեր

կայքի ժառանգ են և մեր ունելիքի տէր են : Եւ այսպէս մարզն որպէս որդի , ունէր հաղորդակցութիւն իւր Արարէի հետ , իբրև հօր հետ , բայց երբ նորա պատերը չկատարելով զըրկւեցաւ որդիութենից , ուստի մեր տէր Յէսուս Քրիստոսն աղօթքի սկզբումը ասաց ՀԱՅՅ ասել Աստուծոյն և Արարշն , որով նորոգէ այն մեր կորցրած հաղորդակցութիւնը դէպ ի Աստուած , և որդիացնէ Կրան , որի պատճառաւ էլ առաւ մեր մարմինը : Կրոգւի մեր եղծեալ որդիութեան պատկերը , հանէ մեղանից ծառայական պատմութանը և հաղցնէ տուածինը , իշխանական մասանին դնէ մեր մատումը , և կօշիկ մեր ոտումը . (Վուկ . ե . 22) :

Քրիստոսն այս սկզբնական խօսքով ՀԱՅՅ ասաց կոչել այն գերակատար և ամենակարող Եակին , որ մեր ստեղծողն է և մեր տիրողն է , որի առաջ մենք փոշի ենք : Քրիստոս ասաց կոչել Հայր այն պատճառաւ , որ մենք յետ դնենք երկիւղը և չեղանինք , այլ ինչպէս մեր հօր մօտ , այնպէս էլ մեր Արարշն զիմենք , վասն որպէս ասաց աշակերտներին իւր մատնութեան զիշերը “Զեմ անւանում ձեզ ծառաներ , որով հետեւ չպիտէ ծառայն ի՞նչէ շինում իւր տէրը , այլ ձեզ բարեկամեմ կոչում , . (Յով . ժե . 15) որով ցոյց տւաւ մեզ որ եթէ կամենանք կարող ենք՝ միանդամայն որդի գառնալ Աստուծոյն , եթէ մեր գործքերը կլինին բարի , և այն ժամանակ միայն կարող ենք համորձակ Հայր անւանել ինչպէս ինքն ասաց “Որ ձեր Հօր որդիք լինիք , որ երկնքումն է , . (Մատ . ե . 45) :

Ո՞քան մեծ նշանակութիւն ունի այս Կորա մի բառը , որ մեզ բնական արարածներիս տանումէ և Աստուծոյ որդի է շինում , ուրեմն և իւր շնորհական եղայլներ :

ՀԱՅՅ անւանեց այն պատճառաւ որ Կոր կատարում է հօր պաշտօն , ինչպէս մեր հայրն փոքրիութենից մինչև մեծանալը մեր ամենայն կարիքը նա է հոգում , թէ մորմնական կինամկան ապրուսար և թէ հոգեկանը , որ է մեր գատախա-

բակութիւնը և կրթութիւնը, միով բանիւ մեր ամենայն պահասութիւնը լրացնումէ, և Քրիստոս Հօր Աստուծոյ հայրութեան համար այսպէսէ նախատում անհաւատ Հրէիցը. “Չեզմէն ո՞ր մարդը կայ որից որդին հաց ուզէ, միթէ նաքար կայ նրան. կամ ձուին խնդրէ՝ միթէ օձ կայ նրան: Հապա գուք որ չար էք զիտէք ձեր որդւոցը լաւ պարգեներ տալ, ո՞չչափ աւելի ձեր երկնաւոր Հայրն, որ երկընքումն է՝ կտայ բարութիւն նրանց՝ որք խնդրումէն նրանից,, (Մատ. է. 9, 10): Ուրեմն իրաւամբ սովորեցրեց կոչել մեր Արարէն Հայր, որ յայտնի ուսուցանէ մեզ՝ Կորա դէպ ի մեզ նախախնամնւթիւնը, թէ Կա է միայնակ կառավարող և պահպանող աշխարհի, պատճառ որ Կա, սաեղջելով մեզ՝ չը թողեց մեր կամքին, այլ անդադար նախախնամնւմէ, զե եթէ հեռացնէ իւր աչքը մեղանից մի բոսէ՝ իսկոյն կոչնչաննք, ըստ այնմ, “Դարձուցանես զերես քո ՚ի նոցանէ՝ պակասին և ՚ի չեք դառնան,,. (Սաղմ. Ճ. 22):

Քրիստոս ասաց, որ ամենեին ոչ մէկին հայր չանւանել բաց ի Աստուծոյն: Քրիստոսի այս խօսքը շատ հետաքրքրականէ և իմանալու թէ արդեօք ի՞նչ պատճառաւ է արգելում, որ ոչին հայր չասել, որոց մէջ մանումէն և մեր հայրելն, այլ միայն երկնաւոր Հօրն է ցուցանում: Կյույս խօսքը շատ ճշմարիս է, որովհետեւ Քրիստոսի խօսքը յատկապէս պատկանումէ Հրէից, ըստ որում նոքա հայրական դիմաւոր պարաքը ամենեին չէին կատարում, զե չէին դաստիարակում իրանց զաւակներին Աստուծոյ երկիւղե մէջ, և չէին ուսուցանում Աստուծային օրէնքները, այլ բոլորովին բարձի թողե էին արել, և կրթումէին շռայլութեան և վատարարոյութեան մէջ, որ ազգի և Աստուծապաշտութեան կործանիչ մէծացն: որ և գործով կատարեցաւ, վասն որոյ նրանց ասաց, որ ամենեին հայր չասեն երկրում, այլ Հայր անւանեն միայն Աստուծոյն, որ նրանից երկիւղ և ամօթ-

Խածութիւն ունենալով դաստիարակելին բարի ճանապարհով  
Ուրեմն այս բանով կարելի է խմանալ և համոզվիլ, որ մեր  
մէջն էլ այնպիսի հայրն ու մայրն որ իրանց զաւակներուն չեն  
աշխատի տալ Հոգեկան կերակուր, որ է բարի կրթութիւնը և  
դաստիարակութիւնը, և կմեծանան ազգի համար ցաւուցեց,  
ուստի այնպիսիներին ամենելին հայր չկոչել որովհետեւ հայրա-  
կան պաշտօն չեն կանարել, այլ Հայր անւանել միայն Աս-  
տուծոյն, որ նոյն միակ ակնկալութիւնն է, և որոց տայ իւր  
չնորհքը, գոմել բարի դաստիարակութեան ճանապարհը:

**ՀԱՅՐ** ասաց անւանել այն պատճառաւ, որ ինչպէս  
որի՞ն մարդուական ծննդեամբ ունի իրաւունք իւր հօր ժա-  
ռանդ լինելու, այնպէս էլ եւրաքանչիւր քրիստոնեայ թէ իշ-  
խան թէ հարուստ և թէ աղքատ ժառանդ է Աստուծոյ ար-  
քայութեան աւագանի մկրտութեամբ, որ է հոգեոր ծնունդ  
վասն որոյ անւանումենք Հայր: Մեր ստեղծող Եակն, որ  
անելինոյթ է մեկը մենք կոչելով Հայր, ներկայացնում ենք  
մեր աչքի առջեւ, և ոչ թէ ինչպէս ծառայ ահ ու դողով ենք  
մերձենում, այլ արձակ համարձակ որպէս սեպհական և հա-  
րազատ հօր մօտ՝ ինչպէս որպի, որպէս զեւ մեր խնդիրքները  
որ վայելուս է և համեմատ Կորա ամենահարող կամքի և մեզ  
պատշաճաւոր է խնդրել՝ ամենայն երկինզ հեռացնենք մե-  
զանից, և այնպէս զիմենք դէպ ՚ի նա: Քրիստոս իրաւունք  
է տալի մեկ Հայր անւանել աղօթքի սկզբում, և ոչ թէ  
Աստուած, Տէր, Խշան, Երարիչ և այլն, այն պատճառաւ  
որ վատահ ճանապարհ բանայ ամենքի համար և մանաւանդ  
մեղաւորներին միանդամայն սիրո տայ, որ չվախեն և չ'յուշ-  
տահատւին մերձենալու դէպ ՚ի Կա, երբ ընկնում են մեղքի-  
մէջ, վասն զեւ Կա ծագումէ արեգակը՝ և անձրեւ է ածում  
արդարների և մեղաւորների վերայ. այլ ապաշխարտութեամբ  
դիմել դէպ ՚ի Աստուած, և ըստ օրինակի Անառակ որդւոյն  
աղաղակել Հայր:

Սրանից էլ ի՞՞նչ աւելի դեղեցիկ համարձակութիւն ու-

նենայ մարդ , որ իւր Արարծի հետ այնչափ մօսիկ հաղորդակցութիւն ունի , որ Հայր է անւանում , եթէ ամենայն ոք հասկանայ սորա մեծ նշանակութիւնը , ո՞վ չի ցանկանայ “Առլարա զիրկը մանել , որ է անվախճան բարութիւն , անսպառելի ողոմնութիւն , և որի մեջ կտնէ իւր մարմնական և հոգեկան երջանկութիւնքը թէ այս և թէ այն աշխարհութեան :

## ՄԵՐ

Տիեզերքի վարդապետն մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսն ազօթքի սկիզբը ստվորեցնումէ ասել Հայր մեր և ոչ թէ հայր իմ , որպէս զի յոզնակի ասելով Հայր մեր հասկանայ ազօթող մարդն՝ զի ոչ թէ մի մարդոյ կամ մի ազգի հայր է , այլ բոլոր աշխարհի մարդկութեան , վասն զի ամենեքեան են զործք ձեռաց “Առլար , զի Կա ստեղծեց ամենքին . և “Կա լենելով մեր ամենքի Հայր , արդեօք մեք ի՞նչ կլինիք որպիք . հապա ամենքս էլ եղայր ենք , ուրեմն պիտի օգնական լինինք մէկ մէկու , ինչպէս էլ Քրիստոս ասաց թէ՝ և գորք ամենքդ եղայր էք . որով ցոյց տւառ մարդկութեան հաւատածրութիւնը , ստկայն կայ աշխարհի մեջ ուժնազանութիւն , այսինքն մեծութիւն և փոքրկութիւն , իշխանութիւն և հնազանդութիւն , որ մէկն է թագաւոր և թագաւորապն , միւսը՝ իշխան և իշխանադն , մէկն է հարուստ , միւսն աղքատ և այսպիսի ղանազանութիւն կայ և ընտանեաց մէջ , որ մէկ որդին լինում է գեղեցիկ , միւսը տղեղ , մէկը խելօք , միւսը տղէտ , մէկը վաստակող . միւսը շապիլ , մէկը առողջ , միւսը տկար և այլն : Բայց նոցա հայրն մի է և ամենքն եղայր ներ են , և նոցա հայրն հաւատարապէս է ցանկանում ամենքի համար բարութիւն ; իսկ որդիքն՝ որպէս եղայրներ պէտք է սիրեն մէկ մէկու և օգնեն , նոյնպէս ընդհանուր աշխարհն բաղկացնումէ մի ամբողջ զերդաստան , որ ունի մի Հայր Աստուած , և յոզնակի բառով ասում ենք Հայր մեր , որի ողոմնութիւնը սեպհականում ենք ամենքին , ըստ այնմ զի :

“զարեդակն իւր ծաղէ ՚ի վերայ շարեաց և բարեաց և ածէ անձրեւ ՚ի վերայ արդարոց և մեղաւորաց,, :

Թռագաւորք և իշխաննք ոչ այլ ինչ եթէ ոչ անդրանիկ եղշբայրք, որք հողս են քաշում փոքր եղբարց համար և ամենքն էլ բաղկացնում ենք մի եղբայրութիւն և մի որդիութիւն, ուրեմն մեր ասելով ցոյց ենք տալիս թէ Յըրկնաւոր Հայրն չէ սեպհականւում մէկին կամ միւսին, այլ բնդհանուրին և մեզ ամէնքիս շնչումէ հաւասարապէս եղբայրներ, զի՞ Յորա մօտ չկայ մեծ և փոքր, թագաւոր և հպատակ, իշխան և արքուկ, հալուստ և աղքատ, այլ աւասար են, և նա է մեծ՝ ով որ Հօր Աստուծոյ կամքն է կատարում։ Ինչպէս մեղանում նա է մեծ համարում՝ ով որ խելօք և հանձարի տէր է :

### ՈՐ ՅԵՐԿԻՆԾ ՆՅ

ՀԵՅՅ ՄԵՅ ասել սովորեցնելուց յետոյ ցոյց տւառ և տեղը “Որ յերկինս ես,, . ոչ թէ այն պատճառաւ որպէս թէ Յորա էութեւնը բովանդակէ մէկ տեղ այլ զի՞ Յորա փառքն երկնքումն է աւելի երեւում, ըստ այնու “Յըրկինք պատմեն զիաւոս Աստուծոյ,, (Ասղմ. ժը. 1), վասն որոյ ուսոցց ասել “Որ յերկինս ես,, . իսկ Կա է անբովանդակելի, ինչպէս Սոլոմոն ասաց տաճար շնելուց առաջ թէ “Յըրկինք և երկնից երկինք ՚Բեղ չեն բաւական, և ես ՚Բեղ համար տաճար ի՞նչպէս շնեմ,, : Թռէպէտ Աստուած է անբովանդակելի, ստկայն ՚Բրիստոս ասելով թէ “Որ յերկինս ես,, . մարդոյ միտքը և ու շքը յափշտակումէ և հետայնումէ աշխարհի բոլոր հոգսերից և ցանկութիւններից և զարթեցնումէ մարդոյ միտքը “որ յերկինս ես,, ասելով՝ ինչպէս քնից, և աչքերը բարձրացնելով գէպ ի երկինք միտքն էլ ուղղէ գէպ ի Աստուած և միտք բերէ երկնաւոր Հօրը, և այն ժամանակ կարող է նա ջերմեն անդութեամբ աղօթել և ստանալ իւր վարձը, երբ հասկանայ կզարթնի նորա սրտի մէջ կատարեալ զգացողութիւն, թէ նախքան զգատուիլանազանցութիւնը

ունէր Աստուած Հաղորդակցութիւն առ մարդն, միտք բերելով՝ թէ մի ժամանակ իմ նախահայրն ունէր խօսակցութիւն Աստուծոյ հետ և հրեշտակներու հետ, և ես էլ աշխատիմ համեմ այն փառքին՝ զուրս զալով աշխարհային վայելչութիւններից, և բարձրացնելով իմ միտքը դէպ ի երկինքը, կրկնն ձեռք բերեմ որպիտութեանս կորցրած իրաւունքները:

## ՄԵՍԻՐՈՎ ԹԵՎԱԿԱԳԵՎԵՑԻ

### Ճ Ը Ա

Օրիորդների (աղջկանց) գաստիարակութեան վերայ:

### ԳԼՈՒԽ Ը.

Թէ ո՞ւր սկսաւ օրիորդների գաստիարակութիւնն :

Դաստիարակութեան ինչ լինելն և նորա պատուղների զովիլս այս աեղ մանր զրել, կամ որ աւելի լաւն է՝ մեր ազգի օրիորդների քննուշ սեռի գալրոցական կրթութեանը համար այնպէս է՝ որպէս թէ նորից նատած երազներ էինք շենել կամ տւելորդիններից և յոյտնի եղածներից եղել էինք ունայն ճամանակունք: Քանզի՝ եթէ մէկը յետ մտիկ տայ ժամանակների հնութեան վերայ՝ տեսնելով կտեսնէ ոչ միայն նախկին աստուածաշատութեան սեղանը շինած Հայաստանում պատարագել Որ Լին ի նուէր, և առաջին գարու աշխարհի համատարած ազգերի հայրերու ուսման ճարտարութեան և արեւատների զպրոցը, այլև ինչպէս համոզւած ենք՝ պարզ կտեսնէ նա նոցա նահապետական մայրերու առաջին ուսումնականը, այսինքն Հայաստանի Օրիորդների՝ առաջին հրակայուհերի, որք հսկանների հետ գործակից լինելով՝ տարածեցին արհեստն ու զիտութիւնը՝ իրանց որդւոց և թուների մէջ, և մոռնելուց յետոյ իրանց մարդկանց հետ միասին աստուածութեան պատիւ ընդունելով՝ արժանացան աշխարհի

ընդհանուր աղջի խորին երախտազիառւթեան : Ո՞լ է այն Աստղեկն , կամ Արուսեակն , կամ Անահիան , Դսիս , և այս պիսի հազարաւոր անուններ , եթէ ոչ Հայ կանանց ճարտար և հանձարեղ գասը , որ իրանց իմաստութեամբ մարդկային աղջի բարերար հանդիսացած՝ նախ մայրականը , և ապա աստուածականը ընդունեցին մարդկանցից պատիւ : Մէկը շորի գործելը և ձեւ հնարելով , մէկը գեղերի և արմանների զօրութիւնքը փորձելով և բժշկութեան նախամայր լինելով , մէկ ուրիշն էլ անարարութեան կերպ ու կանոն հաստատելով , և այլն և այլն :

Զեայս դրութիւնս ունայն . լինի Հայաստանն , ով ինչ պէս համարիլ յօժարի , գեռ չէ կարող ուրանալ թէ երկու հաղար տարուց յետոյ , այսինքն Աղամից մինչև Գլհեղեղ , ամենայն մարդկան հանդիսարան և ստնդու լինելով՝ որք միայն մէկ լեզու էին խօսում , հնարած չլինի իւր պիտանի արհեստները այնքան բազմութեան կեանքի հեշտութեան համար : Այս արւեստներից , որպէս ամենայն գարելու մէջ , նոյնը և հիմա մեր գարումը՝ ոչ ոք է կարող մերժել կանանց ճարտարութիւնը : Եւ եթէ այսպէս է , ուրեմն առաջին ուսումն էր քնքուշ սեռինը - կանանց՝ որ գանւեցաւ Հայաստանում , և առածածւեցաւ նորա աղջկանց հետ բոլոր աշխարհում .

Թաղնենք հները՝ տեսնենք մեր հայրենեաց հիմիւան վիճակը , ուր շատ լաւ կտեսնէ բարակ քննող բանասէլն , որ եթէ քան տարի խաղաղութեան մէջ մնայ աշխարհն՝ \* ըսկայ արւեստ որ չծաղկի այն տեղ , աւելի շուտ՝ քան թէ ուրիշ տեղ կարելի է : Առ , կազի՛ր դու՝ եթէ կամիս , ամեն կողմից քարւանների գալ ու զնալը , և արդեկը օսար աշխարհների առուտուրը . դեռ մեր երկիրն նիւթը առատու-

\* Օսմանցւոց և Պարսից մայրաքաղաքներից դուրս եղած քննակութիւններն , որք փաշաների և խաների բոնութեան ներքոյ են :

թեամբ՝ և բնակիչների հանձարը մեծացնելով արւեստը՝ ոչ  
ինչ բանի կարօտ չեն մնում: Մեր կանայքն անտեսներ են՝ և  
աշխատողներ իրանց ամենայն գործքերի մէջ, ամենայն ուսա-  
մունքներ հեշտ են սովորում: Մեր կանայքը հիմած զցելով  
շինում են մեզ համար թագիքից սկսած մինչև բարակ ապր-  
շումի ճոխեր: Մեր կանայքն բնական բժիշկներ են, և շատ  
առկաւ աեղ կախալւին իրանց զեղ տալու մէջ:

Աստեղարաշխութեան առաջին զիւան Հայաստանի մէջ  
լինելը, և նորա կատարելագործելը աւելի մեր աշխարհի կա-  
նանցմէն՝ յայտնի ցոյց են տալիք մեր ամիսների անունները՝  
Հայկայ տամն երկու տղերանց հետ և քասանուչորս հսկայու-  
հի աղջկերանց անուններն: Զկայ աշխարհի վերայ ազդ որ  
կարողանայ առաջ բերել այսքան հին, և այսքան հղօր ա-  
պացոյցներ այս զիւանի հաստատութեան համար: Եւ եթէ  
մէկ մէկ համարենք ամենն էլ՝ նոցա ասեղներն նկարչութեան  
մէջ ցոյց են տալիս զարմանքներ: և Տիրոջ տաճարի վարա-  
գործների զարմանալի ասղնեգործութիւնն մեր կուսանքների  
պարձանքը յանդիմնն են կանդնեցնում:

Վենդանական մակնիսութեան զիւութիւնն, որ հիմա  
զրաւումէ բոլոր Եւրոպիու ուշադրութիւնը, որ Աեսներ ա-  
նունով մէկ Գերմանացի 1775 թվին Փրկչական հրատարա-  
կեց մնոթը, (որից պարզ բան գտնարէր հասկանալ) այդ մեր  
պատաւների սեպհական գործնէ անցիշատակ զարերից սկսած,  
զոր և կոչումն “Ազօթք”, Ինչ ժամանակ պատահումէ  
որ հիւանդն զնումէ նորա մօտ, աղօթողն նատեցնումէ զնա  
գէմնագէմ: առնումէ մէկ ասեղ կամ քօրոց պաղունցով, կըծ-  
կումէ իւր ամենայն մասները և շատ շուտ բոլորելով հիւ-  
անդի զլիով, ծործորակով և երեսով, զարթեցնումէ նորա  
և իւր մէջ այն ահապին օրոշակով և մարմնոյ ձկձկոցը՝ մին-  
չե որ բերումէ քուն նորա վերայ և յետոյ ասեղը կամ քօ-  
րոցը նրումէ նորա զլիարկումը, կամ կուրծքի վերայ, իսկ  
երեխանց չալախէշի\* վերայ:

\* Զալախէշ, օրորոցի մէջ երեխի գոշտին է:

Երկրորդ՝ եթէ մէկը աշքը դարձնէ զէպի լուսաւորեալ ազգերի նորութեան վերայ, ճշմարիա որ բարի նախանձի տաշքութեամբ եռացած տեսնելով՝ որչտի կատարելութեան են հասել նոցա կանայքն, որ ոչ թէ միայն ձեռադործ արւեստների պայծառութեամբ են հարսանում, այլ և մասաւոր զիտութեամբ շարադրում են զրքեր մարդկային ազդի ընկերակացութեան համար։ Եւրոպայի բարբարոս և երեկուան ազգերի քաղաքականութիւնն ու բարոյականութիւնն այն ժամանակ հասաւ իւր հիմիկւան կատարելութեան ծայրը՝ երբ նորու օրէնավիրների հասարակախնամ տնտեսութիւնը սահմանեց նոցա կանանց դաստիարակութեան հարկաւորութիւնը։

Հապա եթէ նոքա՝ որ մէր տիեզերակալ թագաւորութեան ժամանակ չունիին և ազդի անուն, որով ճանաչւելէին, սրանով (զաստիարակութեամբ) հասան քաղաքական կրութութեանց բարձրագոյն ծայրին, մեզ՝ որպէս աշխարհի աղքերի սկզբի և նախօհօր՝ առաւել արժան և հարկէ կրթել մէր օրիորդներին զանազան ուսմննելների և պիտանի զիտութեանց մէջ։ Օք ինչպէս մարմնոյ զարդը աինէ, նոյնպէս և հոգւոյ փառքնէ զիտութիւնն։

### ԳԼՈՒԽ 3.

Օրիորդների դաստիարակութեան հարկաւորութեան համար որովհետեւ բանական են։

Օրիորդներն կամ լուս ևս ասել իզական սեսը, լինելով մարդկան ազդի քնքաւ շմամն, լինիերակցութեան սիրունազնն անդամներ, բազուտորութեան և ապարազութեան անբաժան վեճակակիցներ, առաւելապէս կարօւեն ամենաառաջի վայելուց անական և քաղաքական կրթութեանց՝ քան արականը։ Պատճառ որ, նախ՝ մարմնոյ և անդամների աժոյ ակար լինելով՝ պարտին բնութեան պակասութիւնը լցնել արևեստականով և կատարելազործել։ Երկրորդ՝ լինելով կեանքի

և կենցաղավարութեան նազելի մասն, պէտքէ ուսմունքնեւ ըսդ կրթեն իլանցը՝ որ պիտանի և հաճոյական լինին. և աւմբնայն ընկերակցութեան կարգ ու կանոնները սահմանել իւրանց քնքուշ բարքով։ Արովչետե մարդկանց օդնական և զործակից են սաեղծւած՝ ոչինչ բանով չեն կատարում աւրարշութեան նախառես պայմաննը, եթէ զուրկ ու գատարկ էին մնացել կենցաղավարութեան դիտութեանց հրաշալի ուսմունքներից։ Արդիւրանցը չեն մեծացնում Կատուծոյ երկիւղի մէջ, տունը լաւ չեն կառավարում, մարդկանց վաստակը շուայլութեամբ մխսում էին. և սրանցմէն ծագումէր շատ տեսակ շարիքներ և վասաներ մարդկային ազդին։ Վամիայն սոխ ու հաց, դիր սեղանիդ վերայ, և եթէ կառենում ես հրաւիրի՛ր մէկ իշխան կամ թաղաւոր, եթէ քո կինդ, կամ աղջիկ, որ ծառայում են նրանց լինին քաղաքավարի և հաճոյական, հաւատա՛ ձշմարտիւ որ քո ամենապարզ սեղանդ կձգէ գէպի քեզ հիւրերիդ շնորհակալութիւնը։ Իսկ ընդ հակառակն՝ քացախի մէջ հալէ, փոշիացը՝ մարզարիալ ինչպէս Եղիպատոսի ամբարտաւան Աղէոպատրոյ դշխոյն, պատրաստիր սեղան անուշահամ, բայց քո ընտանիքի անքաղաքավարութեամբ ոչ համ կտաս, ոչ հաճութիւն։ Ուստի և առենացն մէծ ծախսերն ոչինչ կլինին, և դու ծիծաղելի քան թէ զովելի։

Տան, — բարեկարգւած և կառավարիչ ունեցող տունն ենք առում, հողին որ կայ՝ կինն է, և այն՝ ուսեալ և աշխատաւորն։ Օք ինչպէս մարմինը կարօտումէ հոգւոյն որ ապրի, նոյնպէս հոգին կարօտումէ ուսմունքին որ լաւ ապրի։ Ուրեմն ով որ կզրկէ իւր աղջիանը մէկ այսպիսի էտկան և ամենակատար կեանքի ամբողջութենից, կամաւ մեռցնումէ զնա բազմառեսակ չարաչար մահով։

ԵՆԵԱԱՆԱՊ. : Արովչետե ինչպէս կըլին ոչինչ չկարող զգալ իւր անձին մէջ լուսաւոր զոյների գեղեցիութենից, նոյնպէս և աղէան չէ կարող զւարծանալ Կատուծոյ հր-

բաշակերտ աղաւրածներով, չե հասկանալ նոցա ինչութիւնը և հարկաւորութիւնը, չե վայելում ինչպէս պէտք է առևառ բնութեան բարիքը, ուստի ինքն աշխարհի համար է մեռած, և աշխարհն էլ նորա համար մեռած:

**ԸՆԹԱՅԵԱԿԱՆՈՎ:** Որովհետեւ անուսումն և անկիրթ միաքը չունի այնքան կարողութիւն, որ կարենայ զըտել և որոշել մոլարն ու ճշմարիար: Ուստի և անգիտութեամբ կամ փոփոխակի առաքինութիւնը խառնումէ մոլութեան հետ առանց զանազանելու, և կամ բնութեան բնական յօժարութեամբ գէպի չար կողմը՝ աւելի վատին է սովորում՝ քան թէ լաւին ու աղնիին: Չէ խորշում մոլութեան գարշելի և Գարդոն գէմքից, չէ դրկում ասասուածարար առաքինութեան դարշապարը, այլ երկու ճանապարհի վերայ շրջումէ միշտ կաղ, չէ ճանաչում՝ եթէ Տէրն է իւր Աստուածը, թէ Եկկարոնի Ճանճիկին:

**ԵՍՈՅԱՇԽՈՒՄԵԱԿԱՆՈՎ:** Որովհետեւ անուսումն և աղէտ հողին ոչ զիրը կարող է քննել, որացմէն կեանք սաանայ, և ոչ աղօթքների ինչութիւնը և եղանակը, ուստի և ոչ օրինաւոր հողւով կարող է աղօթք անել: Ո՞չ թէ ինչպէս արժանն էր՝ զիտենայինք աղօթքի կարդը: Մարդիկ մարդկանցմէն մէկ բան ու գելու համար հազար հնարքներ են պատառում, հազար անգամ զաած հնարքները խառակում են և ինչպէս զաս սերտում: և այնպէս ահուզողով ու պատկառանքով առաջեն գնում: աօգա ի՞նչ քան ջանք և եռանդէ հարկաւոր՝ երբ մէկը պատրաստի խօսել Աստուծոյ հետ, թագաւորաց Թագաւորի և ախրաների Տէրոջ հետ: Հայոց ազգի պատելի ծնողներ, ամենքին էլ աղաչումնենք՝ ի սէրն Քրիստոսի ականջ զնել այս խոնարհ առաջարկութեան: Եթէ ձեր մատղաւ աղջկանց ուսումն ու զաստիարակութիւնն աւելորդ և անսպիտան համարի ձեր աշխարհական կենցաւզավարութեան և անական կասափարութեան օդաբին, ոյնուամենայնիւ զեռ երեք զամ հարիւ պահանջւումէ, ձեր մաղ-

թանքների և պաղատանքների Աստուծոյ հետ և աղօթքների համար օգնականութիւն։ Դեռ չորս զամբ հարկիւ պահանջվումէ ձեր սուրբ եկեղեցւոյ ամբողջութիւնը պահելու համար, գեռ բիւրապատիկ ստիպումնով է պահանջւում ձեր անմահ հոգւոց և ձեր զաւակների քնքուշ հոգւոց փրկութեան համար (ուսմունքն ու զասախարակութիւնը)։ Բնութիւնն ստիպումէ ձեր ծնողական գութը նախախնամ հոգացողութեամբ ջանալ և լաւացնել ձեր զաւակների ապակայ երջանկութիւնը, և ի՞նչ երջանկութիւն կարող են տալ մահկանացուքն՝ եթէ անուսում պահեն իրանց զաւակները սուրբ Գրքի զիսութենից, զվեն զնոսա այս կեանքումն փառառոր աստուածախօսութենից, և միանգամայն հանգերձեալ կեանքումը Աստուծումնն։ Հապա եկեք մեր ազգի ծնողնե՛ր, որ մինչեւ այսօր ժամանակը անհոգութեամբ կորցրած մեծ վնաս համարելով մեզ և քաղցրիկ ծնողներիդ, բռնեցեք զիսութեան զրօշակը, և ահա ձեր աչքով կուեմնեք ձեր աշխատանքի պրատուզը։ Ենեցեք տեղ տեղ օրիորդների ուսումնարաններ, և ահա նոքա կմեծայնեն ձեր համար զիսուն, առաքինի և աստուածապաշտ աղջկերք։ Եթէ զիսութեանց ուսումնարաններն մեկ ուրիշ ոչինչ օգուտ անեն նրանց՝ զոնէ կհրաժարեցնեն զնոսա պարապարպութենից, ծոլութենից, կըրթեն զիսութեան մեջ, կըսաւորեն նոյցա միտքը արևեաներ զանելու, կշնեն իրանց մարդկանց համար ժրազլուխ և պրասակ. և ահա էստունք միայն է, միայն էստունք եմ ասում՝ որ կհասուցանեն. մեզ ձեր բալոր ծախքը, պատճառ որ պարապորդութիւնն է, ամենայն չարութեանց ծնող։ Երանի լըսելու ականջներ լինին քան թէ վեր քաշելու քթեր։

### ԴԱՍԽՈ Գ.

Օրիորդների զասախարակութեան համար, որով հետեւ քրիստոնեաց են։

Եթէ մեկը՝ պէլացած նայէ միայն մեր Օրիորդների արտաքին կերպարանքների փառաւորութեան վերայ՝ ոսքից մինչեւ զլուխ, Աստուծոյ ճարտարութեան այն գեղեցիկ առ

լարածին վերայ, անահասկան կերպարանքի ձգողութեան հը-  
րաշալի դօրութեան վերայ, այնչափ ուրախութեամբ հիացած  
իւր մոքի մէջ ցանկանումէ նրանց ամենայն բան որ ինչ սի-  
րուն, որ ինչ վայելուշ, և որ ինչ երանելին է նոցա վիճակին:   
Այդ մենք էլ ենք ցանկանում, լուսաւորեալքն էլ են ցան-  
կանում և բարբարաներն էլ են ցանկանում: Խոկ դու հապա-  
ծնո՞ղ, ի՞նչ ես մատածումքո մէջ՝ ասա՛, չէ՞ որ ցանկանալով  
կցանկաս քո քնքուշ և ազնւուհի զաւակիս այն ամենը՝ որք  
կարող են առնել վնա միանգամայն հրեշտակ մարմնի մէջ:   
Եթէ որ Շշմարտապէս ցանկանում ես, էլ ուրիշ միջոց չու-  
նիս՝ քան զուսումնարանները:

Եթէ մարմնի արտաքին կերպարանքով, որքան և սի-  
րուն լինի՝ դեռ կարօտումէ իւր վարք ու բարքը ուղղելու,  
հոգին ու հանձարը կատարելազործելու, և յարմարացնելու  
անձն մարդկային ամենայն բարեկարգ ընկերակցութեանը, ա-  
պա ո՞րքան առտել իթէ վեր առնես գնա ինչպէս զքեղ բա-  
նական հոգի: յատկապէս ստեղծւած իւր Արարէ և քո կա-  
տարելութեանց կերպարանքին, և առաւել զալար և քնքուշ  
նիւթից քան թէ դու, որովհեաև զու ստեղծւեցար հողից,  
իսկ նա քո կողքից, ոչ միայն այս աշխարհի ամենայն լաւ ու  
վաս զիարւածների մէջ քեր միայն վիճակակից և օգնական է՝  
այլ և Առւատծին թագաւորին ժառանգակից և արքայու-  
թեան հաղորդ:

Ուսեալ օրիսրգի անձնական օգտի համար՝ փոքր իշառէ  
խօսեցինք վերե, այժմ խնդրում ենք համարձակութիւն խօ-  
սել փոքր իշառէ ընդհանուր օգուտների վերայ՝ որք անպատ-  
ճառ հետեղում են քրիստոնէտան ուսմունքին և կրթութեան:

Եթէ լնդհանուր աշխարհի մէջ՝ թէ անցեալում թէ  
ներկայում և թէ ապաղայում նայինք միմիայն քրիստոնէտ-  
ական հաւատն է ծաղկեցնող և տարածող քաղաքական կեանքի  
և անական երջանկութեանց աստուածային և ծայրադոյն  
բարոյականութեանց ձեռքով, զոր ոչոք չէ կարող ուրանալ:

Ուրեմն վեզրիկ կոյմն՝ որ հասակի հետ մեծանայ և այս աստուածային վարդապետութեան ուսման մէջ՝ կլինի աստուածատէր հարմն. մարդուն սիրող կին, քաղաքավարութեան օրինակ, ընկերութեան գարդ. հաւասարատես անտես, անսահման դիմութիւն, հաւասարախնամ գշխոյ, հաւասացեալ բարեպաշտ, աղջկանց պարփեշտ ուսուցիչ, մանուկների բարեպաշտ դաստիարակ, եկեղեցւոյ հաստատութիւն, աշխարհի պարձանք:

Այսպիսի իմաստուն կանանց համար ասումէր Սոլոմոն շինել իրանց աները և եօթն սիւներ կանգնեցնել նրանց մէջ։ Այսպիսի իմաստուն և աշխատաւոր կանանց համար աղաղակումէր նա թէ իրանց մարդկանց պատիներն են։ Քայց Հայաստան աւելի ևս կարաց և կարող է առաջ բերել շատ երեկելի կանայք՝ որ եղուծ են և կլինեն մեր սուրբ եկեղեցւոյ հաստատութիւն և սիւն իրանց զիսութեամբ և իմաստութեամբ։

Պարակց Յաղկերտ թալաւորն իւր անզգայ արեղակն առած ձեռին (որ պաշտումէնն Վատուծոյ տեղ)՝ պատերազմնումէ Վրդարութեան Վրեկակի (Քրիստոսի) երկրագագողների հետ, և իւր հանդչող կրակի մոխիզը համարձակումէր ցանել մեր խաչակիր նահատակների զլիօնն։ Վարդանիքը նահատակներով ընդդէմէր կանգնում նորս կամքին, բայց ո՞ր զէնքով ու գորութեամբ, երբ բավանդակ աշխարհն երկրառակութեան մէջ էր, և կնամարդի կայսրն (Յունաց Մարկիանոս) վախեցած՝ միայն իւր անձին խաղաղութիւնն էր ու գում։ Վաս' հիմի, ի՞չնչով։ Վայրական և իւր բարեկալշտ ուսմունքով։ Պատճառ որ նորս մայրն լինելով Պարթեազնն սուրբ Վահակ հայրապետի զոււսոր, իւր հօրից սովորել էր սուրբ Գիրքը, և համարեալ թէ կաթնի հետ աւել էր իւր որդւոցը՝ Վարդանին, Համազասպեանին և Հմայեակին, քաջացրեց զեղեցիկ առաքինութեանց բարեկալշտութեամբ և

արխութեամբ։ Այսպէս էին սնում այն երջանիկ գալումը և ամեն նախարարութեանց Տիկիններն։

Իսյց սպանւեցաւ Վարդան սուրբ պատերազմումը քրրիստոնէական հաւատի համար, և կարծւում էր այն ժամանակի թէ աշխարհն ոտնակոխ եղած կը կործանի, քրիստոնէութիւնն էլ կվերջանայ արեւապաշտութեան մէջ ընկղմելով։ Հէնց այդպէս էլ կլինէր, եթէ սուրբ կանայքն՝ այս Հայոց աշխարհի առաքելուհիքն հոգս չէին արել կրթելու. և դասախարակելու. իրանց գաւակիներին միանողամայն ներքին և արտաքին գիտութեանց մէջ։

Մեծ մասն համարեա թէ մեր բոլոր ուխտապահ նախարարների կապած էին Պարսից թագաւորի գոտնը, ուրեմն Յագկերտի և նորա յաջորդների ամրարիշա կամքի կատարելուն ի՞նչ արդելք կար։ Պատասխանում ենք, ընդհանուր ՈՒՍՈՒՄՆ ժամանակի մարդկանց և կանանց։ Մեր (պատմաբան) Պավար Փարագեցին զբում է «նահատակուողների կանայքն, և Յագկերտից կապւածների կանայքն» թէպէտ նեղութեան մէջ էին, սակայն ուսումնառածներ էին, և ոչ թէ անհոգ և անպիտան կանանց պէս, այլ ինչպէս քաջ մարդիք՝ մանուկների մտաւոր օգտարեր ուսումն էին հոգում։ Եւ մասնուանս (Զեիկ) սուրբ Վարդանի եղրօր Հմայեակ նահատակի կինը, որ եղաւ անուանի կին գերազանցեցաւ Հայաստան աշխարհի բոլոր կանանց վերայ ամենայն լու և մտաւոր բնութեան մասունքներով, որ մեծացրեց և խրատեց Վրաց բրդեշն Աշուշայի կինն,։ Եթէ կյօժարւի որ ե իցէ կին այս կանանց վերջը, բայց և դաստիարակութեան հոգար տեսնել, նոյն հեղինակին լիով զրում է։ «Եւ մասնուկներն այն աեղ մնւած և մեծացած՝ յառաջադէմներ և հոչակաւորներ էին ամենայն բանի մէջ, որը գեռ ևս՝ մանուկ հասակում՝ ամէնքն էլ յաջողակ ու զարմանալի էին երեսում մոքի տեսնելով,։ Այսպէս ենք կամենում հայկազուն ծնողներին (իսկա-

կանն է Ապակաթայի սուրբ Սանգուլստ կուսի ուսումնարանի հոգաբարձուհու վերայ, բայց մենք յոգնակի ենք զրում) տեսնել աղերանց և աղջկանց ամենայն ուսմունքներով յաջուզակներ և զարմանալիք: Տես աչա այս օրիորդների դաստիարակութեան վախճաննը, եթէ կապած նախարարների կանայքն և եթէ Հայեկի Ձւիկ կինն իրանց մանկութեան ժամանակն չեն չեն սովորել ուսումնի՝ չեն կարող մննդել և պատրաստել մեր աշխարհի և եկեղեցւոյ ազատութեան համար: Մայրական մնաւնդն յիստափ կարէ շինել ամենայն աղային ինչպէս Վահան Մամիկոնեանին, և ամենայն աղջկան՝ ինչպէս Վահակապուլս, որ է Արմեաց Ստեփանոս եպիսկոպոսի քոյրն, որի համար այսպէս է զրում Ստեփանոս Օրպելեան. «Աս յոյժ հմուտ էր, ասէ, երաժշատկան արւեստին, որ վարագուրի ներալ նստած՝ սովորեցնում էր շատերին, և արաւ (այսինքն սրբագրեց) քաղցր եղանակ կցորդներ իւմեղեղիք, որոցմէն մէկն է Սրբուհի Մարիամ, որ իւր անւամբն է շարադրած»: Որի պլիստառերն են Վահակապուլս:

Էլ ի՞նչ գրեմ մեր թագաւոր Աշոտ Ե. Մարիամ զըստեր, և Գրիգոր Պահաւունի (Մագիստրոսի) Ըուշան տիկինի համար, և այն կանանց համար որ հին ժամանակում եղել են մայր և գայեակ կրթութեան և ուսման:

Տեսէք օրիորդների ընդհանուր դաստիարակութիւնը, թէ ի՞նչպէս կացաւ եկեղեցւոյ հասաւառութեան սիւն այն ալէկոծւած գաչի մէջ. ապա ուրեմն հետեղեցէք (մայրեր) օրինակին՝ եթէ եկեղեցւոյ սէր ունիք, որպէս զի և ձեր աղջկերն մայր դառնալով բարեհնունդ զաւակների կարողանան ընծայել Ազգին Վարդան և Վահան, կամ զոնէ երաժիշտ Վահակապուլս և հրաշաբան Ըուշան:

### ԳԼՈՒԽ Գ.

Օրիորդների դաստիարակութեան համար, ոլովչեւ աւ անտես և մայրեր են:

Անհատն, այսինքն մէկ անձն չէ բաղկացնել մէկ տուն, այլ աշխարհագրական հասարակ կանոնով առած, պահան-

ջումէ գոնէ վեց հոգի տուն բաղկացնելու համար . որք են՝  
սկեսառ , սկեսուր . մարդ ու կնիկ . որդիք , ծառայք և աղա-  
խիններ : Արդ այս անձինքների համարներից զանազան պաշ-  
տօններ են ծաղվում , որ ամենն էլ հարսնացուն սովորած և  
կրթւած գիտէ իրա աեղին ծառայել , պատել , սիրել , մնու-  
ցանել , հրամայել և միանդամայն խնամել , և այլն . մէկ այն-  
պիսի անոյշ և լաւ կերպով՝ որ գործն երևայ , ոչ թէ բըռ-  
նութեամբ՝ այլ կամեցողաւթիւնից առաջ եկած : — Այս հարս-  
նութեան հաճայական եղանակն՝ խկապէս կարոսումէ ունե-  
նալ ընդհանուր աեղեկսւթիւնք պատմութեանց , մարդկային  
աղջի բարք ու վարքին առ հասարակ , և որ մեծն է առ ըր  
Պրքի շուտ շուտ կարդալուն :

Մեր զրութեան երկրորդ մասն է անտեսութիւնն , որ  
շատ հեշտ բան է թւում երբ լիքը տանից լիքը տուն է զը-  
նումքո աղջիկդ , բայց այնպէս չէ : Որովհեակե շատ լիքը  
տներ դատարկւեցան տանտիկինների անխելք կառ ավարու-  
թեամբ : Հապա նախ առաջն՝ հարկաւոր է նրան զիակնալ  
տնտեսական ուսումը . զիտեցածը գործքով կատարել ոչ ձեռ-  
նափակ լինել և ոչ ձեռնաբաց , այլ միջեն ճանապարհը բըռ-  
նել , որ է Զափաւորութիւն : « Կա պէտք է և թւարանական  
գիտութեան աեղեակ լինել , որով եկամուտը կշոելով ծախսի  
հետ՝ աչք զցէ դէպ ի խնայողութիւնը , և օրական ապրուա-  
տից գոնէ մէկ չնչին բան յետ զցէ նեղ օրւայ համար : Տըն-  
տես և անարար կանայքն պիսի զիտենան չափս և կշեռք ,  
ինչպէս . և ամենայն բանի զինը և ինչութիւնը՝ թէ հազնե-  
լու և թէ ուտել խմելու , որ ծառաներին պատճառ չայց ի-  
րան խարելու առուտուրի մէջ : Եւ եթէ այսպէս՝ աւելի  
լաւ կանեն ծնողքն՝ եթէ սեղանի և հանդերձեղէնի զնելու  
ծախսերը յանձնեն օրիորդներին , և կամ տան նրանց հաշւե-  
տումարը (գավթարը) , որ նոքա զրեն և վարժւին : Ամենից  
առելի պէտք է ունենան նոքա չափաւորութիւն իրանց շորերի  
և զարդերի մէջ . պատճառ որ զարդերի աւելորդութիւնն

մինչև անդամ շինուամ է նրանց ծաղր՝ իւր ամենայն կրթւած ընկերակիցների աչքումը։ Եւ թէպէտ անկարելի բաների հաշուամն է համարւում զարդերի քչացնելը նրանցմէն, բայց գեռ էլի ճար կայ։ Գիտութեան ։ Ճշմարիտ զիտութիւնն ենք ասում, երբ խորը կարմատանայ նոցա մաքումը, և կառնուն քաղցրութեան ուղիղ ճաշակը, այն ժամանակ հենց իրանք ոչ ինչ կհամարեն երկրի սպազումն դիրալ \* և զիտութիւնը կը համարեն իրանց թանկապին զարդ, որ ոչ գողը կգողանայ և ոչ ցեցը կապականէ։

Սեր ազգի . . . . մէջ սակաւ տեղ մի տուն կվագւի մի տեսակ, կայ՝ որ յաջողակ, և կայ՝ որ դժբաղդ զիտւածներն փոխուամն նորա արտաքին կառավարութիւնը զէպ ի ուրիշ կերպ վիճակ։ Բայց զիտութիւնն՝ որ առաջնորդ լինի արարար տանտիկիններին՝ կառավարել յաջողութեան ժամանակին միլիոն, նայնը ձախորդութեան ժամանակ կշտփառորէ նորա ապրելու եղանակը, բաւականանալ քչով, և հարստութեան փոխանակ՝ ինքն լինուամ է իւր մարդուն միանդամայն միարժարութիւն, ուրախութիւն և կատարելութիւն։ Տգէտ կոտրացածն նախատինքի պրժանի կլինի։ Բայց զիտուն և կատարեալ աղքատացածն՝ աշխարհի ափստելու։

Տեսնենք այսուհետեւ տանտիկինոջ պաշտօնը նորա միւս կողմով։ Այժմ զիցուք թէ նա մայր է, գու ասա՛ թէ երեխայքը նորա չորս կողմով կպլատում են, գու ասա՛ թէ հայերէն խօսքերով, որովհետեւ աղդասէր ծնողները ոչ մի ժամանակ չժողին այլազգի ծառաներին և աղախիններին սերմել նոցա մնադաշ մաքումը իրանց օտար խօսքերը և բարքերը։ Այս բանի մէջ Հայ ծնօ'լ, ի՞նչն ես լաւ համարում քո աղջկայ համար քո թոռների գտատիարակութեան մասին։ Դեռ զպրոց զնալու հասած չեն, բայց կարող են իրանց բարբառով յայտնել իրանց կարիքը, սովորում են բարիքների հա-

\* Ակնեղէն, քարեղէն, մարգարեղէն։

զար անուններ, չսովորի՞ն հապա և Գերագոյն Բարերարի  
անունը, որ նրանց ստեղծեց։ Զգիտենա՞ն թէ օրական շը-  
նորհքի համար փոխարէնը ի՞նչ պիտի տան, չսովորի՞ն սի-  
րելնրան, և նորա համար իրանց ընկերներին։ Եւ ի՞նչով  
կլինի այս ամենը, եթէ ինքն մայրն չգիտենայ ներքին և ար-  
տաքին զրեանքը։ Միայն ծնողների անհոգութիւնը դաս-  
տիարակելու համար տղայցը նոցա մատղաշութեան առաջին  
հասակումը՝ պարտաւոր կամէ ծնողներին պատասխանատու  
լինել նոցա ապագայ վարք ու բարքի համար Աստուծոյ ա-  
հեղ զատաստանի առջեր, հապա ո՞ւր կմնայ՝ եթէ ոմանք  
շարժւած դառն տղիսութենից մանաւանդ թէ և դառնաւ-  
գոյն ամբարշտութենից՝ փոխանակ սերմանելու մատղաշ երե-  
խայի զւարթ և պաղաբեր բարեկառն դալար մոքի մէջ աղ-  
նիւ մնադեան և աստուածային ամենաքաղցր և անոյշ ուս-  
ման առողջարար սերմօրէնքը՝ սովորեցնեն նրանց անպատշաճ  
կատակներ (մասսալութիւն) և չլւած աններելի յիշոցներ։  
մուածելով՝ թէ տղայն դեռ փոքրէ, և չար ուսմունքն չեն  
ներդործել նորա մէջ։ Ուստի և փոխանակ լացլերն և կրո-  
բելու այնպիսի վասութիւնքը, աւելի ու աւելի յորդորում  
են տղային, և իրանք անզգայի պէս նատած ծիծալում են։  
Ավարձութիւն, որի վախճանն է զաւակների և միանգա-  
մայն ծնողների անշնաբին կորուատը։ Այսպիսի չար սովո-  
րեցնող ծնողներն ունեն և չար զաւակներ Բետուղմայի մէջ,  
որք աեսնելով Եղիսէն անցկենալիս այն կողմով գուացին  
“Եւ-կնտակը (գուրս եկաւ քաչալը) եւ-կնտակը,,։ Այսը բ-  
Գիրքն կոչումէ նրանց փոքր մանուկներ, և սրանց ի՞նչ  
մեղք որ գուում էին Աստուծոյ մարզարէի վերայ՝ թէ “Եւ  
կնտակ, եւ կնտակ,,։ Բայց և այնպէս՝ սուրբ Գիրքն ջոկ  
ստորագրում է վարհուրելի հետեանքը։ Յետ դարձաւ ա-  
սումէ՝ մարզարէն, տեսաւ նրանց որ պսափիկ երեխայք էին,  
սակայն անիծեց նրանց Աստուծոյ անունով, և ասաց “մեղ-  
քի և դատարկութեան որդիք։ Եւ գուրս եկան անա-

պատից երկու արջ, ու պատուեցին նրանցմէն քառասուն ու երկու երեխայ, : Տեսն՞ւմ ես որ երեխանց փոքրկութիւնը, կամ նոցա անհասակ լինելը ոչինչ արգելք չեղաւ ։ Աստուծոյ արդար պատուհասին, և զեռ զու ծնօ'զ, կհամարձակւի՞ս Աստուծոյ պատուիրանքի հակառակ, եկեղեցւոյ օրէնքների հակառակ, և ամենայն ընկերութեան բարի անողեան հակառակ՝ նոցա մատղաշ մաքումը չար բան սերմանել, և բարի բան հնձելու ազք ունենալ։ Զէ չէ այդ քո ունայն կարծիքդ հեռի տար, ոչ ոք երբէք քաղեց տատաշեց թուզ, կամ փըշեց՝ խաղող։

Ենհոդ ծնողների մեծարդոյն յանցանքներից մէկն այն է, որ իրանց բոպէտական հանդստութեան համար սկսում են աշհալի անուններով և աներեղիթ էակներով և խրտելակներով (աշմաջուչայ) վախեցնել իրանց մատղաշ վաւակներին, ասեւ լով՝ “զրողն առնի քեզ, գեն առնի;” և ինչ որ այսպիսի խառնիխուռն արարածներ կան։ Ոլովք ո՛չ միայն թէ, շատ անզամ յանկարծանահեն անումնրանց, այլ նաև և միշտ վախեռոտ և անողիտան համարեա՛թէ մարդամիջութեան և ընկերութեան մէջ։

Մենք կամք չունինք այս սովորութեան անողիտանութիւնը և նոցա չարաչար և տիրալի հետեանքները մէկ մէկ հաշւել, բաւական է ասել, թէ քիչ աեղ, որ իւր տղայութեան հասակում անսնունդ և անուսումն եղաւ, օրինաւոր հօր կամ մօր անուն ժառանգեց։

Աստուծմէն յետոյ ծնողքն են պատճառ իրանց վաւակներին, և ինչպէս Աստուծ վերեկից թափումէ նոցա վերայ իւր անւատ ողբանութեան և ինսամքի շնորհքը, այնպէս էլ ծնողքն պարսական են միշտ աշխատել և կաթնի հետ ծծել տալ նրանց ամենայն քաղցրութեամբ և ինսամքով աստուածամիրութիւն, բարեպաշտութիւն և ազգասիրութիւն։ Միանգամայն ասել, եթէ ուսեալ օլիորդներ մայր չդառնան մեր ազդի ապագայ սերունդներին, ոչ Ճենաց հարստութիւնն,

և ոչ Եւլոպայի արհեստներն բաւական կլնին մերերի քնաւորութիւնը փոխել վասթարից դէպի ի լու կողմը։ Այնքան տնջնջելի և խորն են տպաւորւում երեխանց մաքի մէջ մայրական ուսումն ու գաստիարակութիւնը մանուկ հասակում՝ մինչեւ որ տառերի արտասանութիւնն էլ անկարելի է յետոյ կանոնաւոր ուսմունքով ուղղել։

Մէկ ժամանակ պատահելով Կոստանդնուպոլսումը Մը խիթարեան մի քանի վարդապետներին իրարու հետ խօսելիս մօտ գնացի նոցա միջեւ ծերին՝ հարցրի “թէ ձայր՝ ձայանտանցի՞ ես,,,: Պատախաննեց “Այո,,,: Խոկ ձօրմիվեան հայր Գէրրգ վարդապետն զարմանալով հարցրեց ինձ, “թէ ի՞նչ պէս ճանաչեցիր նրան,,,: Պատասխաննեցի՝ Ճ. Հ. Զ. տառերի արտասանելուց։ Արկնեց, “ապա մենք ի՞նչպէս ենք արտասանում,,,: Կոստահի դուք ուրիշ տեսակ ձայն հանելով, ինչ պէս այս տեղեւ սովորութիւնն է :—“Այդ առաջանումէ, աւսաց, մեր մայրական դաստիարակութենից, որ միանգամայն այդպէս սովորած, չենք կարում յետոյ փոխել նոյնը,,,: Այս խօսակցութեան մէջ ձ . Գէրրգ վարդապետն ՄԵՐ ասելով և միւս զիտնականների դասն էլ որ այն տեղ կային, մէջ էր բերում։ Այդ՝ եթէ մեր ազգի այնպիսի երեւելի և հոյակապ մարդիքը, որոց անդադար աշխատութեանցը մեր Ազգի գրադիտութիւնն պարտականէ՝ չեն կարողանում մօրից սովորածը փոխել, հեշտ բան է ուրիշների համար փոխել, բարին դէպի ի չար կամ չարը դէպի ի բարին, որ մանկութեան ժամանակ սովորել են մօր դաստիարակութեան հետ։ Քա՛ւ լիցի, կաթնի հետ մասձը՝ հոգւոյ տալու հետ գուրս կդայ։ Ձապա աշխատինք ընափիր Ազգ, քանի որ ձեռքերնիս ժամանակ կայ՝ ջանք անել, և ուսումնարանական զիտութիւններով կրթել մեր ազգի ապագայ ծնողներին, որպէս զեւ կարողանանք ապահովել մտքերը տղիտութեան երկիւղեց և ամենայն չար հետեանքներից։

### ԳԼՈՒԽ Ե.

Մեր օրիորդների գտապիարակութեան վերայ ըստ  
ոլում չայ են:

Օրիորդների համար պէտք են հրապարակական ուսում  
նարաններ: Քանի զի քո որդիքը սովորելով՝ աան մէջ՝ միայն  
իրանցն են տեսնում և իրանց վարժապետին որ շատ անգամ  
զանց է անում՝ կամ քաշում է ծնողներից խրատել, յան-  
դիմանել և սաստել նրանց ինչպէս հարկն է: Ուստի և նոցա  
բնական կամապաշտութիւնն զնալով՝ զնում է և զօրանում  
հասակի հետ իւր ծնողաց համար ցաւ և ոգեմաշութիւն:   
Իսկ հրապարակական դպրոցում, եթէ վարժապետուհին կա-  
տարեալ է իւր պաշտօնի մէջ, նորա օրինակով՝ յառաջադէմ  
և ուսումնասէր աշակերտուհիքն սիրա առած աշխատում են  
ուսման, և վատթարներից ու ծոյլերից հեռանալով՝ դէպ ի  
լաւ կողմն են զնում: Զօրու և ունայն է կարծիքն, որ մի  
քանիսն ունին, իրը թէ իրանց որդիքն վաս օրինակներով  
դպրոցումը վատանում են, քան թէ լաւերով կարողանան լա-  
ւանալ: Զի թէ նոցա բնութիւնը առաջուց չլինի ապական-  
ւած, թէ ծնողքն ցոյց տւած չլինին իրանց զլուխը վաս օ-  
րինակ, և թէ մէկը ազդականներից և տանըցիքներից չլինի  
սերմած նորա մատղաշ մաքի մէջ մոլորութեան ուսմունքներ  
ամենեին հաւատալի չէ՝ թէ հրապարակական դպրոցում, ուր  
չարը միշտ պատճեռում է, և լաւերը պնակում են իրանց  
աչքի առջեւ, նոցա վարքն ու բարքը ապականւին: Կա և  
եթէ վարժապետն կամ վարժապետուհին նւաճած չլինի հա-  
րուստների կամքի տակ, և չիցէ վարձած՝ որպէս ողորմու-  
թեան ապասող, այլ անկախ և աղատարար վարէ ըստ կանո-  
նի իւր իշխանութիւնը կամապաշտին և անհնագանդին պատ-  
ժել, հեղ և ուսումնասէրին պատւել՝ անկարելի է եթէ լաւ  
նպաստին չհամնի քո որդին\*:

\* Առենաբանն խօսում է վարժապետների բուն իրաւունքը

Հարկաւոր է մեր օրիորդներին առաւելապէս դաստիարակութիւն, ըստ որում Հայ, այն պատճառաւ՝ որ իսկզբանէ յաւիտենից մեր Ազգն վաճառական լինելով թէ խաղաղութեան և թէ խոռոշութեան ժամանակ, պարտաւորւած են միշտ վաճառականութեամբ շքջել ամենայն աշխարհ։ Կարգացողն այս գործքի յարմարութիւնը որ աստիճանի մէջ էլ ձևացնէ ինչպէս իւր կամքն է, դեռ հեռացածներն անկուշացանկութեամբ իրանց տնական որպիսութեանց իմանալուն ևն փափաքում, և ընտանիքն էլ նոյն չափով կարօտում էն իմանալ իրանց ճանապարհորդ ընտանու առողջութեան և առուառութի հանգամանքները։ Եւ ահա այս տեղից ծնումէ նամակագրութիւն գիտենալու հարկաւորութիւնը, որ Ազգի արական և իդական սեռին իմիասին է պարտաւորում։

Վաճառականի գործն այնքան արթնութիւն է պահանջում, որչափ և քաղաքական կառավարութեան, և նորա ընտանիքը են նորա խորհրդապահները և անսական խորհրդականները. արդ՝ եթէ նոքա չունենան զիտութիւն, որ կարողանան իմացանել միմեանց խորհուրդները, վեճակը, և տան հանգամանքները, քաղաքինը և աշխարհինը, որի մէջ բնակվում են, աեւ թէ քանի՛ անկարգութիւնք և վնասներ առաջ կգան։

Ների վերայ, բայց չէ զիտացել թէ այժմ մեր Հայոց ազգային ուսումնարանների մէջ վարժապետներն ոչինչ ներգործութիւն և ազգեցութիւն չունին, այլ են ինչպէս մաթիմատիկայի մէջ զբօն։ (0), ըստ որում ամենայն աեղ ուսումնարաններն ունելով հոգաբարձուք և տեսուչներ, վարժապետների իրաւունքները ըստ ամենայնի այնպէս է կտրած՝ որ աշակերտին եթէ ասի “ուղիղ նստիր”, հակառակ պատասխանը կսանայ. և կան վարժապետներ, որ վարձկանի պէս ակնունելով ուղրմանթեան, սուս ու փուս կան, և ոչինչ նկատողութիւն չունին աշակերտաների վարք ու բարքի և ուսման վերայ։

Օրինակի համար բերենք մէկ կամ երկու Շշմարիս անցքեր որ պատահեցան փոքր ժամանակով առաջ Պաղայում։ Մէկ մարդ իւր կինը թողնելով իւր մօք մօտ գալիս է Հընդկաստան բանելու. և մի քանի ժամանակից յետոյ ստանում է ջոկ ջոկ նամակներ իւր մօրից և կտոջից միմեանց վերայ գանդասաններ։ Օտարականն մոռանալով աջ ու ձախ պատահած հոգսերը օտարութեան մէջ, աշխատում է երկուսին էլ ջոկ ջոկ պատասխան զրել և համոզել գէպ ի խաղաղութիւն։ Ազարազգութեամբ ոչ մէկն էլ նրանց մէն զիր չղիտենալով՝ տանում են նամակներն իրանց թազե իրիցի մօռ՝ որ կարգաց : Վարդում է երկուսին էլ առում է նամակների միաքր : Հիմի տես՝ թէ ի՞նչպէս երկուսի խորհուրդներն էլ յայտնեցան։ Ակեսուրն չարանում է հարսի վերայ և հարսն էլ առ ելի սկեսեր վերայ, որ այնչափ հեռաւոր աեղ հասցրին իրանց զանդասանքը։ Որից ծագում է տան մէջ ամեն օր անպակաս խռովութիւն և անհամութիւն։

Բայց գետ այս ամենը ցաւերի սկիզբն է, որովհետեւ այն զրադէար կամ սրբակրօն քա անայն, որ այն թղթերը կարգաց սկսում է հրատարակել ամեն աեղ թէ այս անուն հարսն ու սկսուրը այս աեսակ նամակներ են զրել։ Ժաղովրդի մէջ ընկնում է քչիչոց, և կրակը հետնուշեար վառելով այրում է միանդամյն տունը և տանամիկիններին։ Եհա քեզ առաջին տասինան աղիսութեան Ազգի կանանց։ (Եւ այսպէս անզրագիտութեան պատճառաւ իրանց տան ծածուկ խորհուրդները յայտնում են զիր զիտացողին, և առ հրատարակում է, որից պատճառում է տան վեասը)։

Եւելորդ եմ համարում կրինել այս աեղ թէ պէտք է մեր օրիսրդներին դաստիարակութիւն, ըստ որում են Հայ՝ առնլով և մեր Ազգի առաջնորդութենից զէպ ի քաղաքավարի կեանքի ընկերութիւնը, որպէս և Աստուծոյ գանազան շնորհքներից սեպհականած մեր աշխարհին։ Այս նահապեաի ժամանակով և նորս որդուոց և թոռների՝ 450 տարի միջու

ցում\* ապրելով՝ Կոյ Հայտառանում՝ ջրհեղեղեց յետոյ :  
Ի՞նչ երանութիւն էր մեղ, եթէ մեր տևենայն ծնողներն  
գիտէին և գաստիարակէին մեղ Հայոց ազգի այս մեծ ար-  
տօնութեան մէջ : Եթէ մենք մեր պատութիւն անծանօթ զը-  
տանւինք, ապա ի՞նչ մեղազրութիւն և ուրիշ ազգերից, բայց  
այդպէս չէ, ժամանակն դուռն է հասել, որ մեր օրիորդներն  
այսուհետեւ մայր լինին որդւոց, ոչ միայն ծնանելով՝ ոյլ  
մնալով, և կաթնի հետ ծծել տալով Հայտառանի Աստ-  
ռածառառը պատիւը :

### ԳԼՈՒԽ Օ.

Օրիորդների գաստիարակութիւնն ըստ որումը ըն-  
կերակցութեան զարդեր են :

Այսրենի մեծացած ազգերի բարբարոսութիւնն, որ ո-  
չինչ աւելի էր ճանաչում քանի զմարմնի զավանային ուժը, և  
հանձարաւոր արւեստը՝ իւր որսորդութիւնը, միշտ անար-  
գանքով էր նայում ինչո՞ւ վերայ, ինչպէս իւր տան ակար և  
անպիտան անդամի վերայ : Եւ այս աեղեց է՝ որ անցիշատակ  
դարերից \*\* կանայքը ինչպէս սարուկ և աղախինենին համար-  
ւած, զրկւեցան ամենայն քաղաքականութենից և ուսումնա-  
կան կրթութենից : Տայց երբ որ սկսան մարդկը աւելի քա-  
ղաքականութեան հետեւիլ, և ազգը ազգի հետ շագկապ ու-  
նենալ՝ քիչ քիչ ծաղկեցաւ նոցա մէջ զիտութիւն, և ժա-  
մանակ ժամանակ մեծագործ և խելօք կանայք, ինչպէս որ  
արական հոգւով ու մաքայլ երեցած՝ լնդհանուր սեսի հա-

\* Կոյ նահապեան ջրհեղեղեց յետոյ չէ ապրել 450 տա-  
րի, զի նորա բոլոր կեանքն էր 950 տարի, ջրհեղեղն եղաւ-  
նորա 600 տարեկան ժամանակն, ուրիշն նրամէն յետոյ ապ-  
րեցաւ 350 տարի :

\*\* Անցիշատակ զար՝ ինշանակի անցայտ ժամանակ :

մար բացին լնդարձակ Ճանապարհ մասնել արականների հետ  
ընկերութիւն և հաւասարութիւն :

‘Աս և առաջն գարուց (Ջրհեղեղեց յետոյ) սկսած ան-  
դադար պատերազմներն պակասայնելով արականի թիւը՝ շա-  
տացրեց իդականի գասը, որ պատճառելով բազմակնութեան  
ոկիցն, ցածացրեց շատ փափուկ սեռի (կանանց) յարգը. և  
նրանց են խումբ խումբ ժողովեց մէկ կանանոցի (Հարամվա-  
նայի) մէջ, անելով զոհ մարդկանց յիմարական նախանձին և  
կասկածանքին, և փակեց հեռացրեց նրանց ամենայն ընկե-  
րութիւնից, ինչպէս հիմա էլ տեսնում ենք Օսմանցւոց և  
Պարսից մէջ, ուրիշ տեղ էլ: Մեր գերութիւնը ընկնելով  
այսպիսի ազգերի ներքոյ՝ հինգ հարիւր տարուց սկսեալ մենք  
էլ նոցա պէս սովորեցինք, ոչ թէ մեր կանանցը ժողովել մէկ  
տեղ, այլ պատերի և վարագուրների տակ պահել նրանց,  
զրկելով ամենայն կենցազօգուտ և պիտանի գիտութիւններից,  
որով մէկ ժամանակ Հայոց աշխարհի ամելիներն, Ճշմարիտ  
պարծանքի պատուղներ տւին:

Տեսա՛ր կարդացող, որ մեր օրիորդներին գըկելը պիտա-  
նի ուսմունքներից և կրթութենից՝ մեր ազգին չէ բնական,  
այլ թէ գերութեան հետեանքներն են աղիտութիւնն և ան-  
կրթութիւնն: Վաղ անցկացաւ գերութիւնն, ընդէ՞ ապա  
ստրկութեան (աղիտութեան) շղթաները չեն կոտրաւում:  
Տղիտութեամբ ընկանք՝ աշխատինք գիտութեամբ կրկնն  
կանգնիլ:

‘Կախախնամ Արտօչութիւնն շինեց նրանցը ընկերութեան  
համար, այս' և մեր ընկերութեան զարդի համար, եթէ մենք  
էլ վայրենաբարոյ ազգերի պէս մերժենք նրանց՝ կմեղանչներ  
Աստուծոյ իմաստութեան առջեւ, որ ստեղծեց մարդուն:  
Մէնակ Արդ անունք՝ ամաչեցնում է ամենայն մարդուն,  
իբրև կիսարաբած և պակասաւոր, զի մարդկութեան նախա-  
հայրն՝ որ ամենայն կենդանեաց անուն դրաւ, չդառւ իւր  
նմանը, մինչեւ որ չաեսաւ իւր կնոջը, իւր կեանքը, և նրա-

մով միասին եղաւ մի մարդ : “Ե՛տ եղիցին երկոքին ՚ի մարմին մի,, :

Անոթիւնն հոգածու մայրութեամբ ինամբ տարաւ պարզել նրանց ամենայն որ ինչ նազելի, քնքուշ և վայելուն է . որպէս զի նոքա մեզ կանայք լինին , այսինքն կեանք, օդ նութիւն և միփթարութիւն մեր ամենայն կեանքի մէջ, և մենք ինայե՞նք նը նրանց կրթութիւն մեր համար , որ աւելի տաշելով և կոկելով բնութեան կոպատթիւնը՝ շինէ նրանց մեր ամենայն կարիքների մէջ օդնականներ :

“ՎՇ ի՞նչ հարկաւոր են մեր աղջկանց ուսմունք, որ ոչ կոյս են լինելու և ոչ ապաշխարող, . ասում են մի քանիսը :

Պատասխանում ենք :—Խարւում եք Պարոններ . կոյսերին և ապաշխարողներին հարկաւոր չեն այնքան ուսմունք և կրթութիւնք իրանց չոր ու ցամաք զլուխները պահելու համար , որքան ձեր աղջկանց որք կատարեալ հասակներում, և հէնց հիմիկ ել պարտաւոր են ոչ ժե միայն իրանց զլիին՝ այլ ձեզ ծնողներիդ ծառայել և հաճոյանալ, իրանց մեծ եղբայրներին քոյր գառնալ ամենայն հնապանզութեամբ և ընտանիկան սիլով, փոքր եղբայրներին կամ քոյրերին անպատճամանակին մայր լինել, ծերերին պատւել, պառաւներին՝ յարդել, զրացիների սէրը շահել, հիւրերին պատիւ տալ, անծանօթների հետ համեստութեամբ շարժիլ, ծանօթների հետ մարտիլ, օրէ ցօր տան հոգալ կարգաւորել, մօր կամ հօր ամենայն աչքով արած բաներին պատրաստ լինիլ, իւր և ծընողների հոգւոյ համար աղօթել Ասուծոյն, և այսպիսի հազարաւոր անական կարիքները անպակաս լրացնել : Այս ասածներիս ո՞րին հարկաւորութիւն ունի կոյսն կամ ապաշխարողն : Ապա՝ ուրեմն հետու կացեք այդ սնոտի կարծիքներից . և որ մինչեւ հիմայ կոյր զկուրայն (քոռեքոս)՝ ջանացեք այսուհետեւ օրինաւոր կրթութեամբ ուսուցանել նրանց անտեսական և ընկերական կեանքի լաւագոյն եղանակը : Այս չկայ կանոն այբենարանում կամ քերականութենում մէկ որ սու-

վորեցնէ, քո աղջկան թէ ի՞՞նչպէս կարէ իւր եղբօր զգեստը, կամ հօր գուլբէն գործել, այլ սակայն կանոններն, որ նոքա սովորեցնում են՝ մէկ այնպիսի լուսաւորութիւն է տալիս նըրանց մոքերին, որ մէկ տարւայ արտաքին ուստանելիքը, երեք տամաւայ մէջ հասկանալ: Թռուարանութիւնն դանկ ու փող չէ, բայց շատ պատիկ է պահում երկուամբնն էլ: Արւեստներն մէկմէկու առաջնորդներ են, այլ զիր զիտենալն՝ աշմենայն բանի: Ի՞՞նչ ես ասում հիմա ո՞վ ծնօղ. էլի կոյսերի՞ և ապաշխատողների համար է հարկաւոր զիտութիւնն էս պարտականութեանց և պաշտամունքների, իսկ քո աղջկանդ համար՝ ո՞չ:

Ամենայն իմաստուն վճիռ, ուրեմն ընդհանուր Երբոպայում մէկ կենսա արու էլ չպիտի զանւի, որովհետեւ հաղեթէ զանւի մէկ տեղ այն լուսաւորեալ ազգերի մէջ կին, որ չզիտենայ կարդալ ու զրել:

Վառւամ են թէ, աղջկանց պէտք չէ զաստիարակութիւն, զի սիրահարներին զրեր են զրում:

Ամերիկացի Թրանկլին մեծն՝ ասաց մէկ ժամանակ. “Եթէ մարդիկ այսքան չար լինին որ հաւատ ունին. ի՞՞նչ կլինէն առանց հաւատի,,,: Եւ մենք ասում ենք, եթէ օրիորդներն ուսմունքով և կրթութեամբ կարգից զուրս փարւին, ի՞՞նչ կերպ կեանք կվարէին ապա՝ առանց ուսմունքի և կրթութեան: Տայց աւելի հաւանեալ եմ, թէ՝

Պարծանք Հայուհեաց,

Հիմնի յաւէտ յայս,

Չառնել ինչ ընդդէմ

Պատւաց և փառաց:

Ո՞ւ երբէք մղեաց

Պատերազմ ՚ի Հայս:

Առ պաշտպանութիւն

Սրբութեան կանանց :

## ԳԼՈՒԽ Ե.

Օրիորդների գաստիարակութեան համար, որով  
հետեւ նոր բան չէ:

## Ա Ե Ը Ֆ Ը Ա Բ Ը Կ

Առաջին գլուխներումն ցոյց տւինք, թէ ինչպէս արական և իգական նախկին զարոյների սկզբնաւորութիւնը բայց ւելով Հայաստանում, տարածւեցաւ ամենայն աշխարհի մէջ նորա որդուց և աղջկանց հետ:

Այլ և ցոյց տւինք՝ թէ ինչպէս կրթւած կանայքն մեր աշխարհում, ոչ միայն սկզբնական հեղինակներ հանդիսացան Աստուածօրհներգ գրւածների, այլ և աււն և հաստատութիւն եղան մեր սուրբ Վկեղեցուն, Պարսից կրակապաշտ թագաւորների կատաղած կամքի ընդգէմ:

Ցոյց կատանք այսուհեաեւ և այս ուսման շարունակութիւնը՝ այն երանելի կանանցմէն անկատուք մինչեւ մեր օրերը, և նորա այժմեան տարածւիլը Ամենակալի ողորմութեամբ ամենայն տեղուը կան մեր ազգը, թէ բուն Հայաստանում, և թէ նորա գաղթականներում:

Թէպէտ Հայաստան երկիրը ունատակ եղաւ անդութ բարբարոսներից, բայց որքան պակսեցաւ այս աշխարհի արտաքին փառքերից և միմիթալութիւններից, այնքան և աւելցաւ հաւատով գէպ ի երկնաւոր փառքը: Որքան քանդւեցան զիւղաքաղաքներ և գեղեր, այնքան վանքեր և կուսանոցներ աւելցան, որոց պուշների շարժիլն է սաղմոս ասելը: Այս սրբազն և Աստուածագումար միաբանութիւնն էին Հայոց աշխարհի՝ որ անթիւ ահ զողից և արիւն հեղութիւնից պահեցին և հասցրին մեզ մեր լեզուն և մեր աշխարհի ուսմունքը: Այս սրբազն եղայրութիւնն և քոյրութիւնն էին, որ վառ պահեցին մեր բարեպաշտ ազգի ջերմեռանդութեան հուրը՝ գէպ ի երկնաւոր Արդապետի հա-

ւատը : Այս առաքելաշնորհ՝ մհնասատաններն էին, որ ինչպէս  
զովացնող ազբիւրի ակներ վագելով մեր անապատացած աշ-  
խարհի անբաւ ամայութեան մէջ, Հայոց աշխարհի քրիս-  
տոնէից և քրիստոնէուհեաց ճպնաւոր Ճանապարհորդների  
ծարաւը զովացրին այս և այն կեանքում : Մեր զլիուաւոր վե-  
ճակների մէջ չէ պակասել երրեք կուտանոց, և ինչպէս աչքով  
տեսնող և փորձ առնող մանկութեան Ժամանակ՝ ոչ մէկին  
աղայոցմէն զրկեց աստու ածային զիտութեան թաժայ կաթնից :  
Այս, յիշումնեմ, յիշումնեմ, բայց երանի թէ նոյն անմեղու-  
թեամբ՝ որով և սկսեցի – երբ Աքուլիսում, մեր Գողթան  
զաւատի կոչւած զիւղաքաղաքում, որ աշակերտ էի Հայա-  
տանեայց Մայր Աթոռի ուսումնարանում, կրկին աշակերտ  
դարձայ Շաղանի մայրական ուսմանը, սովորելով իմ Աս-  
տուծոյս օրհներսկութեան երդերը : Եւ եթէ կարողանամ  
Ճմիւլ և մղել ու շքս հետաւոր օտարութեան պղտորւած բզ-  
բազմնքից, կարող եմ շատերին առաջ բերել մեր աշխարհի  
երեւլի և անւանի մարդկանցմէն, որ նախ մայրերին և կոյ-  
սերին աշակերտելով հասան իրանց զիտութեան ծայրագոյն  
կատարելութեան չափին : Երանի՛ . հազար երանի մեր աշ-  
խարհին, որ այսպիսի աստուծագումար ուուրբ կանանցով լի է :

Եցեալ զարի վերջին մօտերքը, երբ Հնդկաստանի Կալ-  
կաթա և Մազրա քաղաքներն փայլում էին զպրոցներով և  
ապարանքներով, և Ազգիս պատաննեակներու կոյսերին ուս-  
մունքով և կրթութենով առատացնում էին եթէ մէկը զը-  
նալով (Օսմանեան երկիրը խօսել էր աշխարհի օրիորդների  
գաստիարակութեան վերայ, եթէ չէին քարկոծել՝ անպատ-  
ճառ հերձւածող մարդ կհամարէին, և կարտաքսէին : Իսկ  
հիմա՝ թող Վոստաննիուղուղուումը՝ ուր բարձրադրու իս պայ-  
ծառանումէ միայն օրիորդների Մեսրոպեան մայր ուսում-  
նարանի՝ ուրիշ շատ մեծ ու փոքր զպրոցներով, այլ և որ-  
նական գաստիարակութիւններով . նաև Մեծ և Փոքր Հա-  
յատանի համարեա թէ ամենայն քաղաքներում, ուր զը-

ասմանում են յիսուն տուն՝ այն աեղ գտանում են և Հայոց աղջկանց համար գպրոցներ :

Ո՞վ կհաւատար , թէ Ծէնդան՝ փոքրիկ զիւղն շինած Տաւրիկի լեռան մէկ քնչումը՝ Եշիրաստ զետի ափը , ցոյց տայ զնացող եկող ճանապարհօրդներին իւր հրաշակերա ազգային գպրոցը երկու պահ բաժանուած , մէկը տղայոց համար , և մէկը աղջկանց համար , սակայն և այնպէս աեսայ այն աեղ գպրոցները , որ աեղական Հայոց ընկերութեամբ շինեց մեծանուն Գէորգ Ամիրայն , և անդապար աշխատում էր նորա պայծառութեան և առաջադիմութեան համար :

Վարբի , որ թէպէտ առ առ Մեծ Հայոց Արարատեան նահանգի երկելի զիւղաքաղաք էր՝ Երայի լեռան փեշի մօտ , սակայն Թահմազ զուլի՝ Կատր շահը՝ քարուքանդ արտւ : Իսկ այժմ , կրկնայարկ (երկու էտած) գպրոցներով է պայծառանուում տղայոց և աղջկանց կրթելով ինչպէս և ուրիշ գաւառներում \* :

Տես ընթերցող՝ փոքրներից միայն երկուսը և համարեաթէ աննշաններիցն ենք բերում օրինակ , որով ոչ թէ կամենում եմ տեղ , թէ մէկը միայն էր Տաւրիկէում և միւսը Երարատեան գաւառում , այլ այն թէ՝ ողորմութեամբ Եսատուծոյ այժմ մեր աշխարհը ծաղկած է գպրոցներով ամենայն աեղ , ոչ միայն արականների համար՝ այլ և իդականների :

Օք հիմա հոչակւած են ամենայն աեղ նշանաւոր ուսումնարաններ Երարատի , Ախնեաց , Եղւանից , Տփխասու , Եշատրիսանի , Կոր Կալսիջեանի , Պօլսի , Օմիւռնիոյ , և ուրիշ աեղերում , ուր մեր աղջը փուած է \*\* , որոց մանրա-

\* Վարբի աղջկանց ուսումնարանն ամեննեին չեմ տեսած . Հինգ տարի առաջ , այսինքն մինչև 1861 թիւը : Իսկ տղայոցը ըստ ամենայնի թոյլու հին կոպիտ սովորութեամբ այսինքն է սաղմոս և ժամադիրք . բայց կրթութիւն ոչերբէք :

\*\* Եյս աեղերի գպրոցներն բացի Պօլսից և Օմիւռնայից

մասն պատմութիւնը եթէ կամենայինք ասել՝ մեր բանախօս սութեան չափը կանցնէր :

Եւ ի՞նչու եմ ընթերցողների միտքը գեղ ի հեռաւոր և անծանօթները մասն ածում, ո՛չ ապաքէն մեր երանելի նաև խաչայրները և հիմնագիրները մեր Վարդասիրական Ճեմարանին մտածեցին և հաստատեցին այն, և երկար տարիքներով շարունակ կրթեցին նորա մէջ՝ ոչ միայն ազգայք, այլ և մեր օրիորդներին ազգային և օտարազգի ուսմունքների մէջ։ Այս արին, — և փառք եմ ասալի նոցա անմահ յիշատակներին, որով հաստատումէ իմ այն խոնարհ գատողութիւնը թէ՝ օրիորդների դասախարակութիւնը պէտք է, որովհետեւ նոր բան չէ. այլ 'ի սկզբանէ յաւիտենից սկսած է և շարունակ հասել է մինչեւ մեզ։

Այժմ հերիք է, ընթերցող։ Յնէ խմանաս ո՞ր ասաիծանի գառն կակծանքների մէջ պատկած էի որ զրեցի այս փոքր հասուլառուք ճառը, իսկոյն կշարժւիս գեղ ի կարեկցութիւն և գութ։ և եթէ քո սիրով մնաւած զաւակներիդ սէրը չսահպէ քեզ, զմնէ զիջանելով գեղ ի ցաւագար զրւածիս փսփազը, ասաւածսիրաբար և ազգասիրաբար կըսես իմ պահի պաղատանքներին, և քո ամենայն պարոնութեամբ՝ կջանաս օր առաջ հաստատել գալոց մեր օրիորդների դաստիարակութեան համար, որովհետպէս հաստատ հաւատում եմ, կսանաս շահ քո անձին և քո ազգին Յիսուսի Քրիստոսի անապառելի երանութիւնը, որ ասաց “Յնիլ տուք մննկառոյդ զալ առ իս, և մի՛ արգելուցուք,, :

---

Էին արական սեռի. իսկ 1862 թւից Ոտուաստանի ամենայն հայարնակ քաղաքներում և մեծ զեղերում բացւեցան ո՛չ միայն ազգային արականի՝ այլ և իդական քնքուշ սեռի ուսումնաբաններ, մանսաւանդ Ոտուաց տէրութեան մէջ, որի ցուցակը առանձին պարտք կհամարենք հրատարակել նոցա պատճառների անուններով։

## ԱՏԱՐԵՎՈՐՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍՈՒՅ

Ամենայն ազգ, ինչքան որ կայ աշխարհքի երեսին պահէլ է իրա ծագման, քաղաքների և բնութեանց ժամանակագրութիւնքը, թագաւորութեան սկզբնաւորութիւնը, բարձրանալու և ընկնելու, արհեստների, վաճառականութեան և դրականութեան ծաղկելու և ընկնելու պատմութիւնքը, բայց Աքացիք շատ են մնացել այս ամենահարկաւոր առարկայից, որ է ազգի միակ և անզին դանձը, զլխաւոր պարծանքը և ազգութեան հիմքը։ Կոքա չունին ստոյդ պատմութիւն և եղածներն ել ժողոված են Հայոց, Յունաց, Հռովմայեցւոց, Պարսից և ուրիշ ազգերի պատմութիւններից, որոց հետ ունեցել են յարակցութիւնք կամ պատերազմով, կամ ծառայութեամբ և կամ ուրիշ դաշինքով։ Բայց Աքաց պատմիչները առելացրել են իրանցից զանազան առասպելներ, չունին ստոյդ ժամանակագրութիւն՝ որ կարգացող հասկանաց թէ, այս ինչքաղաք կամ բերդ, եղբ և ո՞վ է շինել, մինչեւ անզամը հոյակապ եկեղեցեաց մեծ մասը չունին արձանադրութիւնք, և այս պատճառաւ նրանց շենութեանց թւերը տալիս են հին գարերին։ Աքաց պատմութիւնը զրել է Աշխաթանդ 6-դ թագաւորը սկսեալ ջըհեղեղից և աւարտումէ մինչեւ Աշխաթանդ 3-դ, այն է մինչեւ 1302 թիւը, որ կոչւումէ ԱՌարթլիս ցիովը է բանի, և մնացորդը լրացրել է նրա որդի Աշխուշարը, բայց լի է առասպելներով, և որչափ հետեւեցայ զանել Աքասանի մէկ ստոյդ պատմութիւն հանդերձ ժամանակագրութեամբ, որ անշուշտ

Հարկաւոր էր այս մեր ներկայ ստորագրութեանը Թիֆլիսու,  
չկարացի ձեռք բերել, թէ ե՞րբ է հիմնարկւած Թիֆլիսուքա-  
ղաքը, թէպէտ շատ քրքրեցի զանազան պատմութիւններ՝  
բայց ուղած տեղեկութիւնս չդասայ, միմիայն Պատլ Վիշես-  
լաւցով ստորագրութեան մէջ՝ որ տալւած է 1836 թւին,  
զրտած է, թէ Վրաստանի ժամանակաւոր կառավարիչները  
Պարսից աղջկց շինումեն բերդ քաղաքի հարաւային կողմը  
լեռ քարափի վրա, որի բարձրութիւնն է 80 սաժէն, և  
կոչում է “Կարիզալայ”, 379 թւին Փրկչական, Պարսից  
թագաւոր Շապուհ Զի ժամանակը. իսկ Վրաց պատմու-  
թիւնը Թիֆլիսու շինելը տալիս է Վախթանգ Գօրգասալան  
թագաւորին 455 թւին, այն է 76 տարի յետոյ քան զբերդի  
շինելը: Հայոց պատմութիւնը, որ աւելի ստոյգ է համար-  
ւած քան զմիւս ազգերի պատմութիւնքը, 455 թիւը տալիս  
է Վազգէն Վրաց բգեշին, զի թէ Վախթանգն էր եղած  
թագաւոր՝ որ նոյն թւին, ասում են թէ, շինեց և Մցիւէ-  
թու եկեղեցին, Վազգէն չէր կարող մայնել Վրաստանի մէջ  
կրակապաշտութիւն, և իր կին Շուշանիկին այնպէս անո-  
րոցմ նահատակել քրիստոնեայ թագաւորի ժամանակ, որ պա-  
տահեցաւ 458 թւին, այլ Վախթանգի համար այսպէս է  
պատմում Փարքեցին, թէ “Վախթանգ անունով մէկը սպա-  
նեց Վազգէնին 481 թւին և ինքը նատեցաւ թագաւոր նրա  
տեղը,, այն է 102 տարի յետոյ քան զբերդի շինելիը, ու-  
րեմն հաւանական է ասել թէ Պարսիկները շինելով բերդը՝  
ընակութիւն էլ կզցէին նրա հիւսիսային և արևելեան կողմը,  
պատճառ որ, ինչպէս և այժմ երևում է միեւնոյն շինութիւնը,  
բերդը քարափի վրայ ընելով չունի տափարակ տեղ ընակու-  
թեան, բացի զօրքի պաշարեղենը և զէնքերի պահելու տե-  
ղեց, իսկ Վախթանգ թագաւորը ոչ թէ շինելէ՝ այլ զուցէ  
մեծացրելէ քաղաքը լինելով ընակիչներով, և նրա որդի Դաշի  
փոխապելէ թագաւորական աթոռը Մծխէթից Թիֆլիս:  
Թիֆլիս քաղաքը լինելով աթոռ թագաւորութեան

Վրաց շատ ու շատ աւելածութեանց տակ ընկաւ, բայց, ափսոս որ չկայ լին պատմութիւն, այլ ժողովածու է զանազան պատմութիւններից, և այսպահ միայն կարողացայ զբանեւ Թօփիլեղու տիրողները և քանդողները, որք են՝

626 թւին Յանաց կայսր Ներակլ առաւ Թօփիլեղը :

855 թւին Բուզայ ոստիկանն առաւ :

1068 թւին Կընուկ—տաճիկները տիրեցին :

1226 թւին, Խորազմիոյ և Պարսից Գալալազին շահը աւերեց և քանդեց Թօփիլեղը և Արօն մայր Եկեղեցին :

1394 թւին Լանկ-Թօփամուրը քարուքանդ արաւ :

1478 թւին Ուզուն Նասան Պարսից թագաւորը :

1578 թւին Ղարա Մուստաֆայ որ և Լալափաշա առաւ Թօփիլեղը Միմն թագաւորի ժամանակ :

1611 թւին Շահարաս առաւ Թօփիլեղը Լալափափ թագաւորի ժամանակ :

1735 թւին Կաղիր շահը առաւ Թօփիլեղը :

1795 թւին Մահմադ շահը, այն է Ախանկիսնը բոլորովին քանդեց և այլեց Ներակլ թագաւորի ժամանակ :

Տեսնելով Գիօրգի 13-դ թագաւորն թէ չէ կարող անվաս պահէել իւր աէրութիւնը Օսմանցւոյ, Պարսից և Լաղջերու արշաւանքներից՝ մոտու Ուուսաց Հզօր կառավարութեան պաշտպանութեան տակը, և նրա մահւանից յետոյ միացաւ Վրաստանը Ուուսաստանի հետ 1801 թւին Յունավարի 18, Պաւլ կայսեր ժամանակ, իսկ Անդամեմերի 12 նոյն թիւ կայսր Աղեքսանդր Ե. Պաւլովիչին երդւեցան ՚ի հաւասարիմ հպատակութիւն, և այն օրից մինչեւ ցայսօր վայելում է Վրաստանը խաղաղութիւն և ամենայն բարօրութիւն :

### Թօփիլեղ ՔԵՐԵՎ

Թօփիլեղ անունը ստացել է տաք ջրերից, որ բղիսում են արեւելեան և հարաւային կողմի քարտավներից : Թօփիլես,

վրացելուն կնշանակէ ջերմ, տաք : Հին քաղաքը շատ փոքր էր, և կարելի է աւելի ամբոց (բերդ) անւանել քանի թէ քաղաք, ինչպէս առվորութիւն է, որ ամուր աեղերումը բերդի են շնուռմ պատերազմի ժամանակ ամրանալու համար, և թիվլիզը, համարեա' թէ առաջն բերանն է Արաստանի, ուստի Պարսիկները, երբ տիրեցին Արաստանն տեսնելով աեղի ամրութիւնը և յարմարութիւնը՝ շնուցին բարձր քարտի վրա բերդ, Առք զետի հարաւային կողմը, 100 սաժէն լայնութեամբ, արևելեան կողմիցը ունէր պարիսպ և բըրջեր մինչի Պուր զետը, և արևմտեան կողմիցն ևս Արթուր զեղեցւոյ պատի կրշտով և թուրքի մէյզանով մինչի Կուրը, որոց քանդառ նշանները այժմ էլ կան, իսկ հիսուսյին կողմից է Առք զետը, ուր ջուրը միատեղ հաւաքւած է զնում ձորի մէջ, և որովհետեւ բերդումը ջուր չիոյ՝ որ պատերազմի ժամանակ զործածէն, ուստի բերդի միջիցը ջորգողի ճանապարհ են շնութ քալուկին թաղով մինչի զետը, որի բերանը բացւած է զասարխանի տակը մէջետի մօտ, և այժմն էլ երեսումէ :

Հին բերդից փոքր ինչ հեռի Տերիսեհեմու եկեղեցւոյ մօտ կայ մէկ զմբէթ, որ աւանդութեամբ ասումէն թէ կոքատուն է կամ կրակատուն, և այժմն էլ նոյնութեամբ կոյ, իմ կարծիքով, աւելի հաւանական է թէ սրբուհին Շուշանիկ, այս հին բերդումն ընի բոնւած և այն կրակատունը Աշզպէնի շնուածը լինի Շուշանիկի պատճառով, որ երկրպագութիւն առաջ կրակին, և ո՛չ թէ Մէտէլսը, ուր այն ժամանակ ոչինչ շնութիւն չէ ելած, և ո՛չ թէ բնակութիւնն նրա շրջակայքումը : Իսկ երբ Ատիթանիդ Գօրդառլան նատեցաւ թագաւոր 481 թւին, աւելի ամրացնելու համար լցրուց բնակիչներով պարսպի արևմտեան կողմը, որ կոչվումէ նոյնպէս հին քաղաք, երկայնութիւնը կլինի մէկ վերաս, և սահմաններն են՝ արևելեան կողմից դարախանայ ասցեալ խրամը կամ ձորը, բերդի պարսպին կալած . արևմտից

և Հիւսիսից մեծ փոս մինչի գետը, որ այժմ ևս կայ և  
թաղով ծածկւած է և սօսոլակի ջուրը անցնում է նրա մի-  
ջով, և հարաւից նարիղալի բերդը, որի կից 1576 թւին,  
երբ Լալավաշյն յաղթեց և քշեց Ալման խանին շինեց նոր  
պարիսպ, որի վերջին ծայրը կոչվում է Շահի թափառ, և  
թէ ո՞ր շահն է նատել այն տեղ, չէ իմացվում. ուր կայ 20  
սաժէն տափարակ տեղ, և Որուաքը շինեցին աստղադիտանոց  
իսկ այժմ քանդւած է: Եւ արևմտեան կողմից դէպի հիւսիս  
մինչի Առւր գետը, այսինքն Մուխտանպարնենց տունը, պա-  
րսպապատ արաւ բրջերով: Այս հին և նոր բերդերը գե-  
ներալ Երմալով կուսակալը քանդել տւաւ, և շինեցին Մէ-  
տէիսի քարափի վրա նոր բերդ: Քաղաքը ունէր հինգ դուռն՝  
1, դէպի հարաւ, ուր է թագաւորական այգին, (ботани-  
ческій сад) և ասվումէ Պանջուգուռուն, ըստ որում  
Պանջու քարվանը էն կողմից ներս կդար, — 2, դէպի արեւ-  
ելք բազանիսների կամուրջի զլսին, և կոչվումէր Երեա-  
նու դուռն, այս տեղից էլ Երևանու քարվանն էր ներս  
գալիս, և դուան կըշտին էր մաքսատունը, (ռախտարխանէն,  
տամօժնեայ). 3-դ և 4-դ դէպի արևմտեաւ, մէկն Յկրաշէն  
եկեղեցու մեծ քուչի դլիսին, Օէյլենց և Տէր Մաստու-  
րովինց տներու մէջ տեղը, և ասվումէր Օտեկիսու դու-  
ռըն, իսկ միւսը Ըթանզիլ Կուկուջանեանցի տանիը մօտ,  
և կոչվում էր Պեղումի դուռն, — և 5-դ դէպի հիւսիս  
ջրի միւս կողմն Մէտէիսի և Ճիսինենց քարավանսարայի  
մէջ տեղը, որի անունն էր Հալվաբարու դուռն: Պա-  
ներն էին երկաթէ, և երեկոյեանները կփակէնն, որոց բանա-  
լիքները կպահէր քաղաքապետը, որ Մէլք էր կոչվում:

Քաղաքի գրութիւնն է բարձր և հարթ հաւասար,  
տեղ գար ու փոս, հին քաղաքը, որ կոչում է բերդի թաղ  
և քարափի թաղ, շատ անձեւնն շինութիւնները, ըստ որում  
բերդի տակը, քարափի լանջի (գոշի) վրա են շինւած, և  
այն, ցլաէշնք, — տեղ տեղ գետնից փորած տներ էլ կան, շա-

տերը լուսամուտներ չունին, այլ կտուրի վրա հերթ բացարած, և շատերն էլ լուսամուտներ ունին, բայց շատ մանր մանր, դռները ցածր, որ մարդ ներս մանելիս երկուտրվելում է, բուխարիք չունին շատերը, այլ օրթաջաջախ, հարուստները ունեցել են մեծ մեծ զարդաներ քարուկրեայ սարդարիներով, և այժմ ևս տեղ տեղ գտանիվում են, քուչեքը նեղ են, այնպիսի քուչեք կան, որ մեկ մարդ հազիւ կարող է անցիենալ, այնպիսի տեղեր էլ կան, որ մեկի տան կառուը միւսի սրահն է, և այս՝ տեղի նեղութեան պատճառաւուն է, որ մեկմեկու վրայ տւած շինուած է, վասն որոյ մեծ մասը, տեղը քարափ ըլնելով, չունին արտաքնոց, ուստի անցուդարձը է մուռատառ և աղբոտ, և մինչեւ այսօր էլ այնպէս է, թէ պէտ մի քանիսը նոր շինութիւնք են արել և ոմանք էլ շենումին նոր տներ, և մէկին կէս աւելի է ծախս ըլնում, բայց քուչեքը աղտոտ են, և ջրի համար մեծ նեղութիւն են քաշում:

Մարիկ տալով քաղաքի դար ու փառ դրութեանը պիտի ասենք թէ, օրը վաս կլնի, և ընդ հակառակն է մաքուր և առողջարար, շատ է օգնում օդի խստակութեանը Կուրգետը, որ քաղաքի միջնո՞ն անց է կենում, և հիւսիսային քամիքը՝ որ փչում են Կովկասի սարերից:

1801 թւին Արաստանը միանալով Ոտուսաստանի հետ, կուսակալները իրանց բնակութեան տեղ ընտրեցին Թիֆլիսը այն օրից սկսան անել նորնոր շինութիւններ եւրոպական ձեւերով և նորոգել 1795 թւին քանդաւծ և այլւած քաղաքը, և խաղաղութիւնը օրէ ցօր հաստատելով՝ ամենայն մարդ ստանց ահ ու դողի թշնամիքներից, արձակ համարձակ իրա գործքին է պարագում, և քաղաքը հետ զհետէ լցւեցաւ բնակիչներով, ու նրա շրջակայքումը շինեցին տներ և եկեղեցիք, թէպէն ամենայն կուսակալ ջանք էր անում քաղաքը մեծացնելու և սպայժառացնելու, և օրէ ցօր յառաջանումէր այդ նպատակը, սակայն, երբ 1844 թւին Ար-

րաստանի կուսակալութիւնը փոխւեցաւ Առվկասեան փո-  
խարքայ ութիւն, և առաջին Փոխարքայ կարգւեցաւ աշ-  
խարհաշէն անձն Գիներալ—Գիլդմարշալ կնեալ Միհայիլ  
Արմանովիչ Ազօնցօվն, իւր այս մեծ պաշտօնի հետ սկսաւ  
հոգս անել Թիֆլիսու պայծառութեան համար, վասն որոյ  
սահմանեց առանձին ժողով բարեշինութեան քաղաքի շրջա-  
կայքին, և երեք կողմը որ մեծ մասամբ դատարկ էր և բնա-  
կիչները նեղութիւն էին կրում անելու մասին, ամենքին Էլ  
իրանց ուզածին չափ լայնարձակ աեղեր տաւ նոր ձեւակեր-  
պութեամբ, և թագաւորական գանձարանից ժամանակաւոր  
զբանական օգնութիւն արքունի շահով, ինքն ևս միշտ մը-  
տիկ էր տալիս նոր շինութեանցը։ Եւ այսպէս Թիֆլիսու  
պայծառացաւ և բազմացաւ առաջինից չորս անգամ աւելի։  
Հիմա սկսենք զրել նրա միջեւ բաները։

Շարունակեացի։

“Առունի,, օրապրի № 10, 11 և 12: 1865 թւի կար-  
գացինք Պ, Ստէփանէի (Ստեփանեանի) դասողութիւնը մեր  
“Գտարուն,, ամսապրի և պ. Տէր Ազէքսանդրեանցի “Առ-  
ճառական կայէթի,, վերայ. սրամով ցոյց է տալի իւր ներ-  
քին կրքերի խոռվութիւնը, և սկսում է զովել իրա զլուխը՝  
իբրև մէկ ուսումնական։ Որին ոչինչ պատասխան չենք տա-  
լիս մեր Փրկչի քաղցը հրամանը պահելով (Մատ և. 39),  
որովհետեւ արդէն Պ. Ստեփանէն՝ իւր զրչով յայնի է ա-  
մենքին։ Բայց ինչ որ կվերաբերի նորա հայկարանութիւնը  
զանց չենք առնի քննելու։”

Հրատարակիչ Ստեփանոս աւագ քահանայ Մանդինեան :

Дозволено цензурою. Тифлисъ 21-го Марта 1866. г.

Կ Տպարանի Պլատոն Առավարտութեան  
Փոխարքային Առվկասու։



1) «Պարուն,, ամսագիրն դուքս զալով ամիսը մի անգամ՝ կապունակէ իւր մէջ հոգեորական առարկայք՝ պատմութիւն քրիստոնէութեան և Եշվեղեցւոյ, ճառեր և քարոզներ:

2) Ռօմաններ, զբոցներ, համառօտ նկալագրութիւնք, տեղագրութիւնք, զրամէք և ոտանաւորներ:

3) Տեսութիւն մատենագրութեան: Արան կվերաբերի կը-րիտիքական քննութիւն հայերէն տպած զբքերի, և պէտա-դօդիկական յօդւածներ:

4) Տնական տարեգրութիւն—սերքին կեցութիւն կայոց, և Գելէտոն:

Յանկացողք ստանալ այս ամսագիրը կարող են դիմել Հրատարակողներ — Въ Редакцію Армянского журнала „ВЕЧНА“ въ Тифлисъ, въ домѣ Протоіерея Ман-денянца.

Ամսագիրը կբաղկանայ չորս կամենդարնի թերթից, այն է 64 երեսից, և 12 տետրակների դիմն է 6 մանէթ՝ թէ Թիֆլիսում և թէ ուրիշ քաղաքներ ուղարկելով:

